Azg
Ազգ
31 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2008 ՈՒՐԲԱԹ 201 (4095)

«Ադրբեջանական բանակը չի կարողանում առավելություն ձեռք բերել հայկականի նկատմամբ»

Ռազմավարական հետազոտություններով զբաղվող Միջազգային ճգնաժամային խումբը գտնում է, որ ՆԱՏՕ-ն պետք է վերանայի Հարավային Կովկասի երկրների զինված ուժերի հետ համագործակցության ռազմավարությունը: Ըստ կազմակերպության, քանի դեռ Ղարաբաղի հակամարտությունը չի լուծվել, ՆԱՏՕ-ն պետք է Ադրբեջանի հետ իր համագործակցությունը կենտրոնացնի այդ երկրի զինված ուժերի ժողովրդավարական, քաղաքացիական վերահսկումը բարելավելու վրա, հաղորդում է «Ազատություն» ռադիոկայանը: Ադրբեջանի ռազմական բարեփոխումներին նվիրված զեկույցում նշվում է, որ ադրբեջանական բանակն առայժմ չի կարողանում հստակ առավելություն ձեռք բերել հայկական զինված ուժերի նկատմամբ՝ չնայած երկրի ռազմական ծախսերի բազմակի ավելացմանը: Ըստ Միջազգային ճգնաժամային խմբի զեկույցի, դա առաջին հերթին պայմանավորված է երկրի ղեկավարության՝ իրական բարեփոխումներ կատարելու քաղաքական կամքի բացակայությամբ: Ադրբեջանի իշխանությունները շարունակում են «բանակին վերաբերվել առաջին հերթին որպես իրենց նեղ անձնական հետաքրքրությունները պաշտպանելու միջոցի», նշված է զեկույցում:

Ղարաբաղի հարցում վերջին խոսքը ժողովրդինն է

Նշում է արտգործնախարար Նալբանդյանը

ԱՐՄԵՆ ՍՏԵՓԱՆՅԱՆ

Երեկ լրագրողների հետ հանդիպեց Հայաստանի արտգործնախարար **Էդվարդ Նալբանդյանը**: Ինչպես եւ սպասվում էր, ասուլիսի գլխավոր թեմաներն էին հայ-թուրքական հարաբերությունները, Ղարաբաղի հիմնախնդիրը, հայ-ռուսական զարգացումները: Անդրադառնալով հայ-թուրքական հարաբերությունների խնդրին եւ երկկողմ բանակցային գործընթացին, նախարար Նալբանդյանը նշեց, որ թե՛ Հայաստանը, թե՛ Թուրքիան եւ ողջ տարածաշրջանն ու միջազգային հանրությունը շահագրգռված են հայ-թուրքական հարաբերությունների բարելավմամբ:

Ըստ Նալբանդյանի, Հայաստանը շարունակում է իր ջանքերը այդ ուղղությամբ, սակայն պնդում, որ հարաբերությունների բարելավումը եւ սահմանների բացումը պետք է տեղի ունենան առանց նախապայմանների: Խոսելով երկկողմ բանակցային գործընթացի մասին, Նալբանդյանը շեշտեց, որ «եթե նույնիսկ բանակցությունները արդյունք չտան, պետք է շարունակել: Սակայն, շեշտեց նախարարը, Հայաստանը շահագրգռված չէ բանակցություններ վարել հանուն բանակցությունների, որոնք տարիներ կտեւեն առանց արդյունքների»: Անդրադառնալով Մոսկվայում սպասվելիք Հայաստանի, Ադրբեջանի եւ Ռուսաստանի նախագահների երկկողմ հանդիպմանը, Նալբանդյանը շեշտեց. «Հանդիպումները ընթանում են ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակներում, սակայն Հայաստանը կարեւորում եւ ողջունում է այն նախաձեռնությունը, որով հանդես է եկել նախագահ Մեդվեդեւը՝ խթանելով բանակցությունների գործընթացը: Հուսով ենք, որ դա նոր ճանապարհ կբացի, որը կտանի հարցի կարգավորմանը»:

Տես էջ 3

Հավաքվել է 137 հազար տոննա խաղողի բերք

Բերքահավաքը շարունակվում է Արարատյան դաշտի, Տավուշի եւ Արագածոտնի մարզերի այգիներում: Ըստ «Արմենպրեսի», այս տարի սպառ է հատկապես խաղողի բերքը, որի բերքահավաքը սկսվել է սեպտեմբերի առաջին տասնօրյակում եւ կավարտվի նոյեմբերի կեսերին: Հոկտեմբերի 29-ի տվյալներով, հանրապետության 17,5 հազար հա խաղողի տնկարկներից հավաքվել է ավելի քան 137 հազար տոննա համախառն բերք, որն զգալիորեն ավելի է անցած տարվա նույն ժամանակաշրջանի բերքից: Հանրապետության շուրջ 35,5 հազար հա մրգատու այգեստաններից հավաքվել է ավելի քան 234, 8 հազար տոննա համախառն բերք, որի քանակն անհամեմատ ավելի է 2007-ի արդյունքից: Անցած տարվա համեմատությամբ այս տարի կրկնակի ավելի է կորիզավորների (ծիրան, դեղձ, սալոր) եւ հնդավոր պտղատեսակների (խնձոր, տանձ) բերքը:

Կկազմակերպվի ծառայող ռուս զինվորների ծնողների այցելություն Երեւան

Ինչպես «Արմենպրեսին» տեղեկացրեց «Համահայկական երիտասարդական միջազգային շարժում» հասարակական կազմակերպության ղեկավար **Անդրանիկ Նիկողոսյանը**, նոյեմբերի 14-ին նախատեսվում է այցելություն Մոսկվա՝ հանդիպելու տեղի «Երիտասարդ գվարդիա» երիտասարդական կազմակերպության հետ: Քննարկվելու է «Ռուս զինվորը Հայաստանում» ծրագիրը, որի շրջանակներում նախատեսվում է կազմակերպել Հայաստանում ծառայող ռուս զինվորների ծնողների այցելություն Երեւան: Մոտ 100 ծնող մեկ շաբաթով կլինի Հայաստանում, կտեսակցի որդիներին, կայցելի զորամասեր: Նախատեսվում է նաեւ հայրենիք այցելություններ կազմակերպել ռուսաստանաբնակ այն հայ երիտասարդների համար, ովքեր երբեք չեն եղել Հայաստանում:

«Ազգի» հասարակական-քաղաքական հավելվածը ներկայացնում է

Նիկոլայ Հովհաննիսյանի «Ժամանակի զարկերակը» հրապարակումը՝ նվիրված աշխարհահռչակ գիտնական Սերգեյ Համբարձումյանի գրին եւ առհասարակ նրա գործին: «Կոմպլեմենտա՞ր է արդյոք ՀՀ արտաքին քաղաքականությունը», հարցնում է Ֆելիքս Կարապետյանն իր համանուն հոդվածում եւ պատասխան որոնում, իսկ Ստեփան Թոփչյանը մտորում է, թե «Ո՞վ է հայը»՝ արձագանքելով Արմեն Այվազյանի հրապարակումներին: Այլ հետաքրքրական բացահայտումներ եւս սպասում են «Ազգի» ընթերցողին:

ՀԱՄԱՌՈՏ

ԱՄՆ-ը կողմ է եռակողմ հանդիպում անցկացնելու Ռուսաստանի նախաձեռնությանը

ԱՄՆ-ը հավանություն է տալիս Ադրբեջանի, Հայաստանի եւ Ռուսաստանի նախագահների եռակողմ հանդիպում անցկացնելու ՌԴ նախաձեռնությանը: Այս մասին, ինչպես հաղորդում է «Թրենդ Նյուսը», հայտարարել է ԱՄՆ-ի պետդեպարտամենտի մամլո քարտուղար **Շոն Մակորմակը**: «Մենք այդ հարցի ուղղությամբ աշխատում ենք բավականին երկար ժամանակ: Տարիներ շարունակ գործում է ԵԱՀԿ Մինսկի խումբը, մենք հուսով ենք, որ այդ նախաձեռնությունը հաջողություն կբերի: Մենք շատ մոտիկից հետեւում ենք դրան», ասել է Մակորմակը, հաղորդում է «Նոյյան տապանը»:

Անկարան զգուշացնում է Բարաք Օբամային

Պաշտոնական Անկարան զգուշացրել է ԱՄՆ-ի նախագահի թեկնածու դեմոկրատ սենատոր Բարաք Օբամային չվտանգել թուրք-ամերիկյան ռազմական համագործակցությունը եւ քայլեր չձեռնարկել Թուրքիային վշտացնելու առնչությամբ: Այս մասին, ինչպես հաղորդում են թուրքական լրատվամիջոցները, Վաշինգտոնում հայտարարել է Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանի արտաքին հարաբերությունների հարցերով խորհրդական **Ահմեդ Դավութօղլուն**՝ նկատի ունենալով Օբամայի խոստումները հաղթանակի դեպքում Հայոց ցեղասպանության փաստը ճանաչելու վերաբերյալ: Թուրքիայի վարչապետի խորհրդականը Վաշինգտոնում հանդիպումներ է ունեցել ԱՄՆ-ի նախագահի թեկնածուներ Բարաք Օբամայի եւ Ջոն Մակքեյնի նախընտրական շտաբների ներկայացուցիչների հետ եւ քննարկել թուրք-ամերիկյան հարաբերությունների հեռանկարները, հաղորդում է «Նոյյան տապանը»:

«Երեւանյան այցելությանս նպատակը նոր մթնոլորտի ձեւավորումն էր»

Ըստ «Նոյյան տապանի», Թուրքիայի հիմնադրման 85-րդ տարեդարձի ժամանակ նախագահական նստավայրում կազմակերպված ընդունելության ժամանակ այս մասին հայտարարել է Թուրքիայի նախագահ Աբդուլլահ Գյուլը՝ ավելացնելով, որ այդ նոր մթնոլորտի ձեւավորումը կնպաստի կողմերի միջեւ առկա խնդիրների լուծմանը:

Ի պատասխան այն հարցի, թե արդյոք կարելի՞ է մոտ ապագայում ակնկալել կոնկրետ քայլեր Հայաստանի հետ հարաբերությունների կարգավորման, այդ թվում նաեւ սահմանների բացման առնչությամբ, Թուրքիայի նախագահն ասել է, որ գործին պետք է մոտենալ կառուցողականորեն, եւ կոչ արել բոլորին աջակցել «նոր մթնոլորտի» ձեւավորմանը: Աբդուլլահ Գյուլի խոսքերով, Կովկասում ամեն ինչ փոխվել է, տեղի է ունենում ուժերի վերադասավորում: «Ես լիահույս եմ եւ ենթադրում եմ, որ կլինեն լավ զարգացումներ», ընդգծել է Թուրքիայի նախագահը:

Հայաստանում կբացվի «Հրանտ Դինք» միջազգային հիմնադրամի մասնաճյուղ

«Ակօս» թերթի խմբագրատեսի պաշտոնությունից հետո նրա ընտանիքի նախաձեռնությամբ ստեղծվել է «Հրանտ Դինք» միջազգային հիմնադրամ: Հ. Դինքի եղբայրը՝ Երվանդ Դինքը «Արմենպրեսին» ասաց, որ աշխատանքներ են տարվում Հայաստանում մոտ ապագայում միջազգային հիմնադրամի մասնաճյուղ բացելու: Հիմնադրամի մասնաճյուղեր կբացվեն նաեւ Լոս Անջելեսում, Սիդնեյում: Հիմնադրամին նվիրատվություններ կհանգանակեն միայն կազմակերպությունները: Հիմնադրամն արդեն առաջին նվիրատվություններն ունի: Հավաքվող գումարները կծախսվեն միայն բարեգործական նպատակներով, նաեւ՝ «ազգերի միջեւ փոխըմբռնմանը, խաղաղության հաստատմանն ուղղված աշխատանքներում»: Հիմնադրամի ղեկավար մարմնի կազմում են Ռաֆել, Զաբել, Հայկանուշ, Խորով, Երվանդ, Արաս եւ Դելալ Դինքերը: Հիմնադրամի կենտրոնակայանը գտնվում է Ստամբուլում:

ՎԻՃԱԿԱԽԱՂ

Ինչպես դառնալ միլիոնատեր ՀԴՄ կտրոնով

Հսկիչ-դրամարկղային մեքենաների կտրոններով հունվարի 1-ից մենք բոլորս կարող ենք մասնակցել վիճակախաղի: Այս մասին երեկ համապատասխան որոշում է ընդունել կառավարությունը: Ներկայացնելով որոշումը՝ պետական եկամուտների կոմիտեի նախագահ **Գագիկ Խաչատրյանն** ասաց, որ վիճակախաղի շահումների ֆոնդը ամսական կկազմի 115 մլն դրամ: Դա, ըստ նրա, կնպաստի որպեսզի բնակիչները պահանջեն ՀԴՄ-ների կտրոնները: Տեղեկացնելով, որ այս պահին Հայաստանում տեղադրված են 35 հազար ՀԴՄ-ներ, Գագիկ Խաչատրյանը նաեւ նշեց, որ դրանց արդյունավետ կիրառման համար, հարկային բարեփոխումների փաթեթով տնտեսվարողներին թույլատրվում է մինչեւ 36 մլն դրամ արժեքով ՀԴՄ-ների կտրոնները որպես ծախսային փաստաթղթ ներկայացնելը: Այսինքն, մի կողմից տնտեսվարողները շահագրգիռ պետք է լինեն կտրոնները ստանալու համար, մյուս կողմից՝ բնակիչները:

Պետեկամուտների կոմիտեի նախագահը համոզմունք հայտնեց, որ վիճակախաղն արդյունավետ կգործի, ինչը ցույց է տվել միջազգային փորձը: Օրինակ՝ Չինաստանում դա հնարավորություն է տվել ստվերից դուրս բերելու տարեկան 12 մլրդ դոլար: Հայաստանում վիճակախաղի շնորհիվ ակնկալվում է, որ տարեկան ստվերից դուրս կգա առնվազն 5 մլրդ դրամ: Վիճակախաղի կազմակերպման համար պետական բյուջեից տրամադրվելու է 1,5 մլրդ դրամ:

Մինչ վիճակախաղի անցկացումը ձեռք են բերվելու եւ տնտեսվարողներին տրամադրվելու ՀԴՄ-ների համար թղթի նոր փաթեթներ, որտեղ կլինեն պատշտպանիչ շերտով պատված թվեր: Եթե 8 նիշանոց թիվը համապատասխանեց վիճակախաղով շահած թվին, ապա շահումը կկազմի 5 մլն դրամ, 7 նիշանոց թիվը՝ 500 հազար դրամ: Բացի դրանցից, յուրաքանչյուր ամիս անցկացվելիք վիճակախաղում լինելու են նաեւ 90 հատ 50 հազար դրամ շահումներ, 900 հատ՝ 20 հազար դրամ շահումներ, 9000 հատ՝ 5 հազար դրամ շահումներ: Վիճակախաղի ժամանակ խաղարկվելու են նախորդ ամսին թողարկված ՀԴՄ-ների կտրոնների թվերը: Լինելու է նաեւ բոնուսային խաղ՝ բարձր արժեքով առեւտուր անողների համար:

Գագիկ Խաչատրյանը հայտնեց, որ վիճակախաղի հանձնաժողովում ընդգրկվելու են նախարարությունների եւ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները եւ հավաստիացրեց, որ ամեն ինչ լինելու է արդար եւ թափանցիկ: Ըստ պետեկամուտների կոմիտեի նախագահի, եթե արդար չլինի, ապա անիմաստ է ընդհանրապես նման վիճակախաղ կազմակերպելը:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Կոալիցիան դեռ չի խնարկել փաստահավաք խմբում ներկայացուցիչներ նշանակելու հարցը

Մարտի 1-ի դեպքերն ուսումնասիրելու նպատակով փաստահավաք խմբում անդամ նշանակելու հարցով կոալիցիան դեռ քննարկումներ չի սկսել: Այս մասին երեկ լրագրողներին հայտնեց ՕԵԿ խմբակցության պատգամավոր, «մարտի 1-ի» հանձնաժողովի անդամ **Հովհաննես Մարգարյանը**: Հարցին, թե ՕԵԿ վկայակցությունն այդ պաշտոնի համար ունի՞ համապատասխան թեկնածու, պատգամավորը հստակ պատասխան չտվեց, նշելով, որ քննարկումների ժամանակ կլինեն թեկնածուներ եւ իրենք միասին որոշում կկայացնեն:

Հիշեցնենք, որ փաստահավաք խմբում կոալիցիոն ուժերը պետք է ունենան 2 անդամ, իսկ նշանակման վերջնաժամկետը նոյեմբերի 3-ն է: Ներկայում փաստահավաք խմբում հայտնի է միայն մարդու իրավունքների պաշտպանի ներկայացուցիչը՝ ՄԻՊ աշխատակազմի ղեկավար, արդարադատության նախկին նախարար Վահե Ստեփանյանն է: «Ժառանգությունը» եւ ՀԱԿ-ը դեռ չեն որոշել՝ կմասնակցե՞ն այդ խմբի աշխատանքին:

Հարցին՝ եթե փաստեր հավաքելու առումով «մարտի 1-ի» խորհրդարանական հանձնաժողովն ունի գրեթե նույն լիազորությունները, ինչ պետք է ունենա փաստահավաք խումբը, արդյոք ն՞րն է նոր խումբ ձեւավորելու իմաստը, Հ. Մարգարյանը պատասխանեց, որ տարբերությունը ոչ թե լիազորությունն է, այլ այն, որ փաստահավաք խմբում պետք է ընդգրկվեն պրոֆեսիոնալներ:

Իսկ պետական մարմինների, մասնավորապես իրավապահների կողմից հանձնաժողովին տեղեկություններ ու տեսանյութեր չտրամադրելու մասով էլ նշեց, որ նրանք պետք է ոչ միայն տեղեկություններ տրամադրեն, այլեւ պարզաբանումներ տան, սակայն իրավապահները ամբողջ ծավալով չեն ներկայացնում տեղեկությունները, ինչի պատճառով հանձնաժողովը վերջնական գնահատական չի կարողանում տալ:

Ինչպե՞ս եք գնահատում այն փաստը, որ «մարտի 1-ի» գործով մի շարք քաղաքական գործիչներ ոստիկանին հրելու կամ դիմադրելու համար արդեն 8 ամիս գտնվում են անազատության մեջ, իսկ ահա երեք մարդու վրա կրակ բացած Ստեփանավանի քաղաքացի Ստեփանյանի նկատմամբ որեւէ խափանման միջոց չի ընտրվել կալանքը: Լրագրողների այս հարցին ի պատասխան Հովհաննես Մարգարյանն ասաց. «Դա զուտ իրավապահների խնդիրն է: Քանի որ քրեական գործ է հարուցված եւ խափանման միջոց որոշողը դատարանն է, ես չեմ կարող այս պահին ասել, թե դատարանն ինչ նկատառումներից ելնելով խափանման միջոցը կալանք չի ընտրել»:

Ինչ վերաբերում է «մարտի 1-ի» հանձնաժողովի աշխատանքին, Մարգարյանն ասաց. «Մենք մինչեւ վերջ չենք ավարտել ուսումնասիրությունը, որ պարզ դառնան եւ մահվան հանգամանքները, եւ ընհանուր առմամբ այն, ինչ տեղի է ունեցել»:

Լրագրողներին հետաքրքրում էր նաեւ, թե արդյոք Անվտանգության խորհրդի քարտուղար Արթուր Բաղդասարյանի մոտ քննարկվե՞լ է Հայաստանի տարբեր քաղաքներում կրիմինալ վիճակի սրման, սպանությունների ու այլ հանցագործությունների աճի բարձրանալու հարցը եւ ի՞նչ քայլեր են կատարվում իրավիճակը վերահսկողության տակ վերցնելու ուղղությամբ: Ա. Բաղդասարյանի կուսակից Հ. Մարգարյանն ասաց, որ իսկապես անվտանգության խորհրդում քննարկվում է ստեղծված իրավիճակը եւ օպերատիվ միջոցներ են ձեռնարկվում քրեական իրավիճակի դեմն առնելու, ինչպես նաեւ կատարված հանցագործությունները բացահայտելու ու մեղավորներին պատժելու ուղղությամբ:

ՆԱԻՐԻ ՄՈՒՐԱԴՅԱՆ

Նոյեմբերին որոշ շրջաններում սպասվում է մինչեւ 15 աստիճան ցուրտ

Ինչպես տեղեկացանք «Հայդրոմետ» ծառայության օդերեւութաբանության կենտրոնի պետ **Զարուհի Պետրոսյանից**, նոյեմբերին օդի միջին ջերմաստիճանը կանխատեսվել է նորմայի սահմաններում, տեղումների քանակը՝ նորմայից ավելի: Լեռնային շրջաններում միջին ամսական ջերմաստիճանը կտատանվի 0-2 աստիճանի սահմաններում, առավելագույն ջերմաստիճանը՝ ցերեկային առանձին օրերի հնարավոր է մինչեւ +10-14 աստիճան տաքություն: Արարատյան դաշտում, մնացած հովային շրջաններում միջին ամսական ջերմաստիճանը կանխատեսվել է +6-7 աստիճան, որը նորմայից 1 աստիճանով բարձր է: Առանձին օրերի ջերմաստիճանը կարող է հասնել +18-20 աստիճանի: Լեռնային շրջաններում հնարավոր է ջերմաստիճանի իջեցում 3-դ տասնօրյակում մինչեւ 15 աստիճան ցուրտ: Արարատյան դաշտում՝ 0-3 աստիճան ցուրտ: Չի բացառվում ձյուն՝ լեռնային շրջաններում, ըստ բազմամյա կլիմայական տվյալների:

Երեւան քաղաքում սպասվող միջին ամսական ջերմաստիճանը՝ +6+7, տեղումների նորման՝ 30 մմ, տարվա նոյեմբեր ամսվա ջերմաստիճանի հետ համեմատած՝ այս տարի սպասվում է 1 աստիճանով ավելի տաքություն: Առաջիկա օրերին Երեւանում սպասվում է առանց տեղումների եղանակ: Ջերմաստիճանը նվազագույնը կլինի 2-4 աստիճանի սահմաններում, առավելագույնը՝ 15-16 աստիճան տաքություն:

Մ. Մ.

Ամենուր աղբ, աղբ ու էլի աղբ... մինչեւ ե՞րբ

«Ազգը» բազմաթիվ նամակներ է ստանում մեր համաքաղաքացիներից, որոնք շարունակ իրենց զայրույթն են արտահայտում մեր քաղաքի անվերջանալի աղբից, որին կարելի է հանդիպել ամեն քայլափոխի: Մենք փորձեցինք քաղաքի համայնքներում օրջել՝ տեսնելու համար, թե գոնե մեկ համայնքում աղբահանության հարցը լուծվա՞ծ է, պարզվեց, որ ոչ: Չնայած Նոր Նորքի 4-րդ զանգվածի 1-ին հատվածի բնակիչները բազմիցս ահազանգել են շաբաթներով, երբեմն՝ ամիսներով կուտակված կենցաղային աղբը տեղափոխելու համար, պատկերը մնում է նույնը, եւ աղբի կույտերի մոտ լավ էլ բնադրվել են կրծողներն ու թափառող շները: Իսկ թափառականները (բոմժերը) իրենց օրվա հացը, հագուստը եւ այլն հենց այդ աղբակույտերից են քցքցում, հաճախ էլ իրար հետ կռվում՝ «տարածը զավթելու համար»:

Որքան էլ աղբահանությամբ զբաղվող ՍՊԸ-ն ինքնակամ բարձրացնում է աղբահանության ամսավարձը՝ 100-ից դարձնելով 150, այժմ էլ՝ 200 դրամ, աղբը մնում է իր տեղում: Իսկ վրդովված բնակիչներին մնում է միայն մեկ բան՝ չվճարել ամսավարձը, մինչեւ նրանց հետ չկնքվի պայմանագիր, որտեղ նշված կլինեն անելիքները եւ դրանց դիմաց գանձվող վարձավճարները: Բնակիչները առաջարկում են նաեւ, որ վարձավճարը մուծեն խնայդրամարկղում կամ փոստային բաժանմունքում, այլ ոչ թե դրտը թակած պատահական անձի, որը մի փոքրիկ թղթի կտոր է տալիս վճարման կտրոնի փոխարեն, առանց կնիքի, ստորագրության, երբեմն էլ՝ կազմակերպության անվանումը անընթեռնելի: Ինչո՞ւ մեր երկրի պետական այրերը չեն մշակում հատուկ օրինագիծ՝ կենտրոնացված աղբահանության մեկ մարմին ստեղծելու մասին, որ դրանից էլ հետագայում պահանջեն աղբահանությունը:

Քանի դեռ աղբահանությամբ զբաղվում են համայնքների ղեկավարների բարեկամները՝ խնամի, զոքանչ, մորաքույր, հորեղբայր... մեր քաղաքը, մեր համայնքները, մեր փողոցներն ու բակերը թաղված կլինեն անվերջանալի աղբի մեջ, որովհետեւ այդ անձինք ոչ թե մտածում են աղբը ժամանակին հեռացնելու մասին, այլ թե ինչպես անել, որ իրենց գրպանները լցվեն...

ՄԱՐԻԵՏԱ ՄԱՐԿԱՐՅԱՆ

ՀԱՆԴԻՊՈՒՄ

Քեթիիյե Չեթինը եւ Հրանտ Դինքի հարազատները Վանաձորում

Հոկտեմբերի 29-ին Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտում Գուգարաց թեմի առաջնորդ Սեբուհ եպիսկոպոս Չուլջյանի հրավերով հյուրընկալվել էին Հրանտ Դինքի իրավապատշգամ, «Մեծ մայրս» գրքի հեղինակ Քեթիիյե Չեթինը, Հրանտ Դինքի հարազատները, գործընկերները: Ինչպես նշեց «Մեծ մայրս» գրքի թարգմանիչ Ռուբեն Մելքոնյանը, Ք. Չեթինի այցը Հայաստան պայմանավորված էր գրքի հայերեն թարգմանության երկրորդ վերահրատարակությամբ: Հյուրերը նախ եղան Հրանտ Դինքի անվան լսարանում, այնուհետեւ հանդիպեցին ուսանողների հետ: Նրանց ողջունեց եւ բարի գալուստ մաղթեց ՎՊՄԻ-ի ռեկտոր, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գուրգեն Խաչատրյանը: Թեմի առաջնորդը շատ կարեւոր համարեց այս հանդիպումը՝ շնորհակալություն հայտնելով այցելության համար:

- Արդարության ջատագով յուրաքանչյուր մարդու նկատմամբ մեր հարգանքը մեծ է,- նշեց սրբազանը:

Այնուհետեւ Ք. Չեթինի գիրքը, որը պատմում է ծագումով հայ իր տատի մասին, վերլուծեցին եւ իրենց մոտեցումները ներկայացրին բանասիրական գիտությունների թեկնածուներ, դոցենտներ Արտակ Սարուխանյանը, Վալերի Փիլոյանը: Վերջինս անակնկալ էր պատրաստել. Ք. Չեթինին իր գրքում հիշատակում է մի հայկական երգ, որից հիշում էր «հինգալան»: Վ. Փիլոյանի խնդրանքով Բոգդան Հովհաննիսյանը կատարեց հայկական ժողովրդական, հովվական երգ «Հինգալան»:

Ք. Չեթինը պատասխանեց ունկնդիրների հարցերին: Նա ափսոսանքով նշեց, որ հայերեն չգիտի; սակայն Հայաստան այցի ընթացքում զգաց, որ դա մեծ թերություն է եւ փորձելու է շտկել:

- Ես պատշգամում եմ արդարությունը, պայքարում տարիներ ի վեր շարունակվող անարդարության դեմ,- նշեց Ք. Չեթինը: - Եթե արդարությունը չպատշգամենք, ճանապարհ կբացենք նոր անարդարությունների համար: Անհրաժեշտ է առերեսվել անցյալին, ինչի համար առաջին քայլն այն իմանալն է ու հիշելը: Եթե մի պետություն տարիներ շարունակ վարել է ժխտման ու մոռացության քաղաքականություն, ապա ինչի՞ հետ պիտի առնչվեն նոր սերունդները: Ահա սրա պատշգամն եմ ես: Այնպիսի մթնոլորտ պետք է ստեղծել, որ հնարավոր լինի խոսել անցյալի մասին, գտնել զրուցակից այդ ցավերի մասին խոսելու համար: Իրականությունը դառն է, սակայն լությունը մահ է:

Ք. Չեթինը անդրադարձավ նաեւ իր գրքին. այն լույս է տեսել 2004 թ. եւ մեծ արձագանք գտել, քանզի շատերն են ունեցել որեւէ հարազատ, ով արմատներով հայ է: Մինչ օրս «Մեծ մայրս» գիրքը, որում նկարագրված է հեղինակի հայրական տատի ճակատագիրը, Թուրքիայում վերահրատարակվել է 8 անգամ, յուրաքանչյուր անգամ նվազագույնը 8000 օրինակով: Թուրքիայի հայտնի թերթերից մեկը հոդված է տպագրել «Հերանուշը իմ տատն էլ է» վերնագրով, ինչն ավելի քան խոսուն է: Ք. Չեթինն իր գրքի մեջ իր եւ իր նմանների անունից ներողություն է խնդրում հայրական տատից եւ նրա ճակատագիրն ունեցողներից:

ՄԱՆՎԵԼ ՄԻՔՈՅԱՆ

Ողողում

Մեր թերթի երեկվա՝ հոկտեմբերի 30-ի համարում, Հայաստանի առեւտրաարդյունաբերական պալատի (ՀԱԱՊ) նախագահ Մարտին Սարգսյանի մամուլի ասուլիսը լուսաբանող «Հայ գործարարները կմասնակցեն Սոչիի օլիմպիական ավանի շինարարությանը» հրապարակման հետ թյուրիմացաբար դրվել է Հայաստանի արդյունաբերողների եւ գործարարների միության (ՀԱԳՄ) նույն օրը կազմակերպած ընդունելության լուսանկարը: Այդ թյուրիմացության համար հայցում ենք Հայաստանի առեւտրաարդյունաբերական պալատի ու նրա նախագահ Մարտին Սարգսյանի եւ Հայաստանի արդյունաբերողների եւ գործարարների միության ու նրա նախագահ Արսեն Ղազարյանի ներողամտությունը:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության ԺԵ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 375010 Հանրապետության 47
Ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
www.azg.am
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՐԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221
Հաշվապահություն (գովազդ) / հեռ 582960
Լրագրողների սենյակ / հեռ 581841
Համակարգչ. ծառայություն / հեռ 582483
Շուրջօրեայ լրահաւաք ծառայություն / հեռ 529353
Համակարգչային շարուածը «Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով՝ կամ ռադիոհեռուստատեսութեամբ առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են - համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում
Գ տարով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:
"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

Մեկնաբանություն

«Աղքատության հաղթահարումը» դարձավ «կայուն զարգացում»

Առաջիկա տարիների բյուջեների, զարգացման միջնաժամկետ ծրագրերի հիմքում դրվելու է կայուն զարգացման ծրագիրը, որը երեկ ընդունեց Հայաստանի կառավարությունը: Լրագրողներին ներկայացնելով ծրագիրը, ֆինանսների նախարար **Տիգրան Դավթյանը** նշեց, որ այն հիմնարար փաստաթուղթ է, որտեղ հստակեցված է մեր երկրի զարգացման ռազմավարությունը մինչեւ 2021 թվականը: Կայուն զարգացման ծրագիրը նաեւ աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի տրամաբանական շարունակությունն է, որը ներառում է ոչ միայն աղքատության նվազման, այլեւ տնտեսական, սոցիալական եւ մարդկային զարգացման ծրագրերը: Որպես թիրախ ընտրվել է Արեւելյան եւ Կենտրոնական Եվրոպայի երկրների զարգացման մակարդակը:

Ըստ ֆինանսների նախարարի, կանխատեսվում է 1 շնչին ընկնող համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) ցուցանիշի աճ: 2012-ին այն կկազմի 5800 դոլար, 2015-ին՝ 7700 դոլար, 2021-ին՝ 12600: Եկող տարվա բյուջեով այդ ցուցանիշը նախատեսված է 4200 դոլար: Տիգրան Դավթյանը նշեց նաեւ, որ 1 շնչին ընկնող ՀՆԱ-ի ցուցանիշով 2017-ին Հայաստանը պետք է հասնի Եվրամիությանը նոր անդամակցած երկրների 2006-ի ցուցանիշին: Ինչ վերաբերում է ՀՆԱ աճին, ապա մինչեւ 2021 թվականը կկազմի տարեկան միջինը 6 տոկոս:

Նյութական աղքատության մակարդակի թիրախային ցուցանիշների մասին խոսելով, ֆինանսների նախարարը հայտնեց, որ համաձայն կայուն զարգացման ծրագրի, 2012-ին աղքատությունը կկազմի ամբողջ բնակչության 15 տոկոսը, 2015-ին՝ 12 տոկոսը, իսկ 2021-ին՝ 7 տոկոսը: Ծայրահեղ աղքատությունը 2021-ին չպետք է գերազանցի բնակչության 1,2 տոկոսը: Առաջիկա 3-4 տարիների ընթացքում մարդկային զարգացման ցուցանիշով, որն ընդգրկում է առողջապահության, կրթության եւ այլ բաղադրիչներ, Հայաստանը պետք է միջին մակարդակ ունեցող երկրների շարքից անցնի բարձր մակարդակ ունեցողների շարք:

Առողջապահության ծախսերը նախատեսվում է ավելացնել եւ 2021-ին հասցնել մինչեւ ՀՆԱ-ի 3,5 տոկոսին, կրթականը՝ 4,5 տոկոսին, սոցիալականը՝ 8 տոկոսին:

«**Ազգի**» հարցը նախարարին այն էր, թե ո՞րն է լինելու աղքատության սահմանագիծը եւ պարբերաբար վերանայվելո՞ւ է: Հարցին պատասխանեց ֆինանսների փոխնախարար **Սուրեն Կարայանը**, որը հաստատեց, որ աղքատության շեմը պարբերաբար վերանայվելու է եւ ծրագրի ժամկետի վերջում համապատասխանեցվելու առողջապահության նախարարության մշակած 2420 Կկալ նվազագույն սպառողական զամբյուղին: Ներկայումս աղքատության սահմանագիծը կազմում է ամսական 1 շնչին 20 հազար դրամ, իսկ վիճաբանության հաշվարկած նվազագույն սպառողական զամբյուղը՝ 37 հազար դրամ: 2018-ից աղքատության սահմանագծի համար հիմք է ընդունվելու առողջապահության նախարարության մշակած նվազագույն սպառողական զամբյուղը: Այսինքն, 2021-ին աղքատության գիծը կգտնվի 55 հազար դրամի մոտ:

ԱԲԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Ղոկտորական ատենախոսության աննախադեպ պաշտպանություն «անբավարար» գնահատականով

Երեկ ՀՀ ԳԱ ակադեմիայի արվեստի ինստիտուտում տեղի ունեցավ բանասիրական գիտությունների թեկնածու Ռոբերտ Դավթյանի «Գարեջրը եւ արվեստը» թեմայով դոկտորական ատենախոսության պաշտպանությունը՝ աննախադեպ իր ընթացքով եւ սկզբունքային նշանակությամբ: Պաշտպանության նյութն ուներ իր նախապատմությունը եւ արժանացել էր մամուլի՝ հատկապես [illegible] թերթի ուշադրությանը:

Ընդունված կարգով նախ՝ Ռ. Դավթյանը ներկայացրեց իր աշխատանքը (սեղմագիրը), որից հետո հրապարակվեց մանկավարժական համալսարանի համապատասխան ամբիոնների մասնագիտական հանձնաժողովի եզրակացությունը, ապա եւ պաշտոնական ընդդիմախոսների՝ արվեստագիտության դոկտ., պրոֆեսորներ Աննա Արեւշատյանի, Լեմս Ներսիսյանի, բանասիրական գիտությունների դոկտոր Ավիկ Իսահակյանի կարծիքները՝ զարմանալիորեն կառուցված նույն սկզբունքով, նախ դվաստանի, արժեւորման, ապա՝ մեծ թերությունների, վրիպումների, անճշտությունների թվարկումով: Ի դեպ, չնայած վերջիններիս բազմաանակությանը, որպես կանոն, եզրահանգումները նույնաբնույթ էին, այն է՝ դրանք շտկելի են եւ էապես չեն կարող ազդել, նսեմացնել ատենախոսության արժեքը: Մասնագիտական հանձնաժողովի կարծիքը դրական էր՝ հեղինակի հայցած գիտական աստիճանի՝ արվեստագիտության դոկտորի երաշխավորությունը: Ատենախոսության անվերապահ պաշտպանությամբ հանդես եկան Ռուբեն Սաֆարեսոյանը, Սվետլանա Խանումյանը, Ռուբեն Մաթեւոսյանը եւ Սուրեն Դանիելյանը:

Ապա ձայնը տրվեց ոչ պաշտոնական ընդդիմախոսներին: Արվեստագիտության դոկտոր Հենրիկ Հովհաննիսյանի ելույթը խիստ քննադատական էր՝ ելնելով գիտական աստիճանաշնորհման ընդունված օրենքների եւ գործող կարգի՝ նա գլխավորը համարեց մասնագիտական պատվախնդրությունը: Ըստ էության, դրական որեւէ խոսք չհնչեց, մասնագիտական դիտարկումները ներկայացվում էին փաստացի հիմնավորումով: Նույն ոգով փորձեց ելույթ ունենալ նաեւ արվեստագիտության թեկնածու Արա Խզմալյանը, որին, սակայն, բորբոքված դահլիճը մի քանի անգամ ընդհատեց:

Գիտական միջավայրին անհարիր լարված մթնոլորտ էր ստեղծվել եւ զարմանալի է, որ նույն մարդիկ նույն աղմուկով փորձեցին կանխել նաեւ երաժշտագետ Մհեր Նավոյանի կիրթ, մասնագիտորեն գրագետ եւ տրամաբանված ելույթը, ինչպես նաեւ՝ երաժշտագետ Կարինե Խուդաբաշյանի::

Արվեստի ինստիտուտի գիտական աստիճանավորման մասնագիտական խորհուրդը (15 անձից ներկա էին 13-ը) դոկտ-պրոֆ. Վիգեն Ղազարյանի նախագահությամբ լարված մթնոլորտում երկար գաղտնի քվեարկություն անցկացրեց՝ դահլիճին 2 անգամ դուրս ու ներս հրավիրելով: Քվեարկության արդյունքում՝ 8 կողմ, 3 դեմ, 2 ձեռնպահ, հայցորդի՝ Ռոբերտ Դավթյանի արվեստագիտության դոկտորի աստիճան սանանալու պահանջը չբավարարվեց:

Վերջում դառնացած հայցվորը ներկաներին հրավիրեց իր դոկտորականի պաշտպանությանը՝ այս անգամ ... Բախվում:

Մ. Ք.

Ղարաբաղի հարցում վերջին խոսքը ժողովրդինն է

1-ին էջից

Նախարար Նալբանդյանը հայտնեց, որ մեկնում է Մոսկվա, որտեղ տեղի կունենա նախապատրաստական հանդիպում Ռուսաստանի եւ Ադրբեջան[illegible] արտգործնախարարների հետ: Նոյեմբերի մեկին կկայանա նախարարների հանդիպումը ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների հետ, որից հետո տեղի կունենա նաեւ հանդիպում երեք երկրների նախագահների մակարդակով: Ըստ Նալբանդյանի, Մոսկվայից հետո Սերժ Սարգսյանը մեկնելու է Փարիզ՝ նախագահ Նիկոլա Սարկոզիի հետ հանդիպելու: Այն հարցին ի պատասխան, թե արդյոք այս հանդիպումների հաճախականությունը նշանակո՞ւմ է, թե իշխանությունները պատրաստվում են շուտափույթ լուծել ԼՂ հիմնախնդիրը, Էդվարդ Նալբանդյանը մեկ անգամ եւս ընդգծեց, որ բանակցությունները ընթանում են մադրիդյան սկզբունքների հիման վրա՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակներում:

Անդրադառնալով հայ-ռուսական հարաբերություններում իբր թե նկատվող բացասական միտումների թեմային, արտգործնախարարը շեշտեց, որ «Հայաստանի արտաքին քաղաքականությունը կրում է շարունակական բնույթ եւ եթե ինչ-որ մեկը նկատել է այդ հարաբերություններում փոփոխություններ, ապա դրանք կարող են ուղղված լինել միայն երկկողմ գործընկերային հարաբերությունների ավելի խորացմանը եւ ամրապնդմանը»: Լրագրողների խնդրանքով անդրադառնալով «մադրիդյան» սկզբունքների շուրջը Հայաստանի եւ Ղարաբաղի իշխանությունների հայտարարությունների միջեւ առկա հակասություններին, մասնավորապես ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանի հայտարարությանը Ղարաբաղի ազատագրված տարածքների եւ Ղարաբաղի անկախության մասին, նախարարը նկատեց, որ եթե կողմերը համաձայնության կամ հանգուցալուծման հասնեն, ապա համաձայնությունը կներկայացվի ժողովրդին, եւ բնականաբար պետք է իր խոսքը ասի ոչ միայն Հայաստանի, այլեւ Ղարաբաղի ժողովուրդը:

«Այդ լուծումը պետք է ունենա համապատասխան աջակցություն Հայաստանի եւ Ղարաբաղի ժողովրդի կողմից: Առանց այդ աջակցության, առանց վստահության, որ ժողովուրդը հասկանում է այդ լուծումները, որ ժողովուրդը ընդունում է այդ լուծումները եւ աջակցում է, որեւէ հարց չի լուծվի», ասաց Նալբանդյանը: Լրագրողների խնդրանքով անդրադառնալով Օսկանյանի որոշ քննադատական հայտարարություններին ներկայումս վարվող արտաքին քաղաքականության մասին, Նալբանդյանը հայտարարեց, որ ինքը խորհուրդներին մեծ ուշադրությամբ է վերաբերվում, «սակայն ճիշտ չեմ գտնում, որ նախկինը նորի կամ նորը նախկինի արտահայտություններին մեկնաբանություններ տա, եւ ճիշտ չէ նաեւ թերթերի միջոցով իրար խորհուրդներ տալը: Օսկանյանի հետ մշտական կոնտակտի մեջ եմ, եթե ինքը ցանկություն ունի խորհուրդներ տալու, ես շատ սիրով կլսեմ այդ խորհուրդները», եզրափակեց արտգործնախարարը:

Նոր նախաձեռնություն՝ «Միացում»

«Միացում» կոչվող ազգային նոր նախաձեռնության սկզբնավորման մասին երեկ հայտարարեցին խմբի ութ հիմնադիր անդամները: Ժիրայր Սեֆիլյանը, Զարուհի Փոստանջյանը, Տիգրան Խզմալյանը, Ալեք Ենիգոմշյանը, Գրիգելդա Ղազարյանը, Հռաֆ Տեր-Աբրահամյանը, Սեդա Մելիքյանը եւ Ալեքսանդր Քանանյանը ասուլիս էին հրավիրել՝ ներկայացնելու իրենց սկզբունքները ու նախաձեռնության ձեւավորման պատճառները:

«Եկել է իրերն իրենց անունով կոչելու եւ ուղիղ գործելու ժամանակը: Լեռնային Ղարաբաղը պետք է միանա Հայաստանի Հանրապետությանը եւ համարվի նրա մարզերից մեկը», հայտարարեց **Ժիրայր Սեֆիլյանը**: «Անշրջելի փաստ է, որ Արցախը կայացել է որպես պետություն: Անհերքելի է նաեւ, որ Հայաստանն ու Արցախը չեն կարող առանձին գոյատեւել», նկատեց **Զարուհի Փոստանջյանը**: Հենց այս գաղափարի շուրջն էլ միավորվել են նախաձեռնության անդամները եւ իրենց պայքարը ծավալելու են երկու ուղղությամբ. Հայաստանն ու Արցախը պետք է լինեն միացյալ՝ ներկայանալով որպես մեկ պետություն, իսկ ազատագրված տարածքներից եւ ոչ մի թիզ չպետք է զիջել Ադրբեջանին: «Հաշվի առնելով արցախյան հակամարտության «մադրիդյան սկզբունքների» հիման վրա մոտալուտ կարգավորման վերաբերյալ շրջանառվող տեղեկությունները, ըստ որոնց Ադրբեջանին են վերադարձվելու ազատագրված յոթ տարածքները, մենք հայտարարում ենք, ցանկացած զիջում վտանգելու է Հայաստանի անվտանգությունը: Ազատագրված տարածքների պահպանումն այն նվազագույնն է, որ կարող է ապահովել երկրի անվտանգությունը: Իսկ ազատագրված տարածքների հաշվին հարցի լուծում կամ էլ փակ սահմանների բացում ակնկալելն ուղղակի ռոմանտիզմ է», նշեց **Ալեքսանդր Քանանյանը**: Վերջինս վերաբնակվել է Քարվաճառում եւ վստահեցնում է, որ այնտեղից հեռանալ չի պատրաստվում: Իսկ վերաբնակեցման խնդրի մասին, նրա հավաստմամբ, վերջին տարիներին ընդհանրապես չի իրականացվում: «1994 թվականից սա առաջին տարին է, որ Քարվաճառի եւ Քաշաթաղի շրջաններում չի կառուցվել եւ ոչ մի տուն», նկատեց Ալեքսանդր Քանանյանը:

Հայաստանի ազատագրության հայ գաղտնի բանակի (ԱՍՍԼԱ) առաջին մարտիկներից **Ալեք Ենիգոմշյանն** ազատագրված տարածքների զիջման դեմոնստրացիայի մասնակցեց ոչ միայն անվտանգության խնդիրը, այլեւ մարդկանց հավատի կորուստը: «Մեր պայքարի մեջ առաջին անգամ հող ենք ազատագրել: Ոգեղեն իմաստով այս միտքն է մեզ ուժ տվել տարիներ շարունակ», ասաց նա:

Նախաձեռնության անդամներն աշխատելու են նաեւ Հայաստանի եւ Արցախի միացման հարցով, որը, նրանց դիտարկմամբ, պետք է ամրագրված լինի իրավական ակտերով: «Իրավական փաստաթղթերի ձեւավորմամբ եւ մշակմամբ լուրջ փորձագետներ են զբաղվում: «Ժառանգություն» կուսակցությունը մեկ անգամ եւս Արցախի ճանաչման վերաբերյալ օրինագիծ կներկայացնի Ազգային ժողով: Արցախի ճանաչումը, սակայն, միջանկյալ փուլ է լինելու Հայաստանի հետ միավորվելուց առաջ», ասաց «Ժառանգություն» խմբակցության անդամ **Զարուհի Փոստանջյանը**:

«Միացում» նախաձեռնությունում ընդգրկված անդամների մի մասը Հայ ազգային կոնգրեսի անդամ է, մյուսներն սկզբունքորեն դեմ են կոնգրեսի գաղափարախոսությանը: «Այս նախաձեռնությունը կոնգրեսի հետ որեւէ կապ չունի: Ժիրայր Սեֆիլյանը, որը կոնգրեսի անդամ է, հայտարարեց, որ դեմ է Լեւոն Տեր-Պետրոսյանի՝ արցախյան հիմնահարցի կարգավորմանն առնչվող դիրքորոշմանը, եւ այս հարցում համագործակցություն նրանց միջեւ դժվար թե տեղի ունենա:

Սարգիս Հացպանյանը «Միացում» նախաձեռնության անդամ չէ: Կինոռեժիսոր Տիգրան Խզմալյանը տեղեկացրեց, որ Սարգիս Հացպանյանը պատրաստվում է կազմավորել «Սարդարապատ» անունը կրող նախաձեռնությունը, որին ամենայն հավանականությամբ կմիանա նաեւ ինքը:

ԱՐԵՎԻԿ ԲԱՂԱԼՅԱՆ

ՕՐԱԿԱՐԳ

Այսօր

◆10.15-«Արարատ» հյուրանոցում տեղի կունենա ճնշարկում՝ «Կրոնի դերը ժամանակակից իրավական պետությունում. խղճի եւ կրոնի ազատությունը Հայաստանում» թեմայով:

◆12.00-Փաստաբանների պալատում (Զաֆյան 3) կկայանա՝ ասուլիս, կներկայացվեն Երեւանի դատարաններից մեկի կայացրած պարտի վճռի մանրամասները:

◆12.00-ՀԺԿ գրասենյակում մարտի 1-ի գործով պաշտպանների ասուլիսը:

◆12.00-Կինոյի տանը (3-րդ հարկ) տեղի կունենա Կինեմատոգրաֆիստների միության նախագահ Ռուբեն Գետոյանցի ասուլիսը:

◆12.00-Խ.Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանի գիտական խորհրդի նիստերի դահլիճում (Տիգրան Մեծի 17, 3-րդ հարկ) կանցկացվի կոնֆերանս՝ նվիրված ավագ դպրոցների ուսուցիչների որակավորման մեկնարկին:

◆13.00-ՄԱԱ-ում տեղի կունենա ճնշարկում՝ «Կոոպտացիան Հայաստանում եւ նրա հաղթահարման ուղիները» թեմայով: Հանդես կգան ՀՀԿ խմբակցության անդամ Գագիկ Մելիքյանը եւ ՀԱԿ ներկայացուցիչ Վահագն Խաչատրյանը:

◆13.00-Ժուռնալիստների միությունում տեղի կունենա Սայաթ-Նովայի անվան երաժշտական դպրոցում տիրող իրավիճակի մասին մամուլի ասուլիս:

◆14.00-«Հայելի» ակումբում սերիալների մասին կխոսեն դերասաններ Լալա Մնացականյանը եւ Ազատ Գասպարյանը:

◆14.00-Գլխավոր դատախազության շենքի առջեւ տեղի կունենա բողոքի ակցիա՝ ի պաշտպանություն քաղբանտարկյալների:

◆14.00-«Արմենիա-Մարիոթ» հյուրանոցում տեղի կունենա Microsoft ընկերության տարածաշրջանային փոխնախագահ Վահե Թոքսյանի եւ էկոնոմիկայի նախարար Ներսես Երիցյանի համատեղ ասուլիսը:

◆14.00-«Արամ Խաչատրյան» համերգասրահում տեղի կունենա հանրահայտ բաս Պաատա Բուրչուլադեի մամուլի ասուլիսը՝ իր հայաստանյան համերգի մասին:

◆15.00-Գրողների միությունում տեղի կունենա Անահիտ Թոփչյանի «Հայելի» գրքի շնորհանդեսը:

◆15.30-Նախագահի մասնակցությամբ տեղի կունենա Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրի բացումը վերանորոգվելուց հետո:

◆19.00-«Մոսկվա» կինոթատրոնում տեղի կունենա Ալբերտ Մկրտչյանի «Տխուր փողոցի լուսաբացը» ֆիլմի պրեմիերան:

«Հայաստանի Ջավախքի (Ասոցքի) շրջանում պահպանվող տարածքների ստեղծումը» մասնակցային պլանավորման փուլում է

Բնության համաշխարհային հիմնադրամի գերմանական եւ հայաստանյան գրասենյակները ՀՀ բնապահպանության նախարարության հետ համատեղ իրականացնում են «Հայաստանի Ջավախքի (Ասոցքի) շրջանում պահպանվող տարածքների ստեղծում» ծրագիրը, որի պաշտոնական մեկնարկը տրվել է այս տարվա հունվարի 25-ին: **«Ազգի»** ընթերցողներին հիշեցնենք, որ Գերմանիայի կառավարության կողմից, գերմանական KfW զարգացման բանկի միջոցով ֆինանսավորվող այս ծրագրի նպատակն է Հայաստանի հյուսիս-արեւմուտքում գտնվող Ջավախք-Շիրակի սարահարթի ուրույն կենսաբազմազանության պահպանումը եւ այդ տարածքի համայնքների զարգացմանն աջակցությունը «Արփի լիճ» ազգային պարկի ու դրա պահպանման գոտու ստեղծման միջոցով:

Այս ծավալուն ու աշխատատար գործի ընթացքին ծանոթանալու համար վերջերս զրուցեցինք ծրագիրն իրականացնող միջազգային խմբի ղեկավար, գերմանացի փորձագետ **Մագնուս Սիլվենի** հետ:

«Ազգային պարկի սահմանները դեռ որոշված չեն, բայց ունենք պլանավորման ընդհանուր տարածք մոտ 60 հազար հեկտար, որի մասը կլինի պարկը,- ասաց պրն Սիլվենը:

- Մեր հիմնական խնդիրներից մեկը այդ 60 հազար հեկտարում ինտեգրված տարածքային հողօգտագործման պլանավորումն է: Դրա շրջանակներում կատարվում է տարածքի բնապահպանական զգայունակության, երկրագործական, անասնապահական տնտեսության ու դրանց հետ առնչվող հողօգտագործման առկա խնդիրների, ջրային եւ էներգետիկ ռեսուրսների փաստացի վիճակի գնահատում ու վերլուծություն: Այս գործընթացի արդյունքը լինելու է մի շրջանակային փաստաթղթի մշակումը, որում կամրագրվեն տարածքի օպտիմալ հողօգտագործման ուղենիշները՝ հաշվի առնելով նաեւ բնապահպանական խնդիրները: Ըստ այդմ կկազմվեն նաեւ ուղենիշ-քարտեզներ յուրաքանչյուր համայնքի համար: Ամեն մի համայնքին նաեւ կառաջարկվի օպտիմալ գլխաքանակի թիվ ըստ անասնատեսակների»:

Տարածքի ամենակարեւոր ռեսուրսներից մեկը, ինչպես նշեց ծրագրի ղեկավարը, ջրային պաշարներն են: Բացի ոռոգման ջրապաշարներից, որոնք տարածքի հիմնականում արեւմտյան կողմում են, նրա արեւելյան հատվածը (Ջավախքի լեռնաշղթայի արեւմտակողմը) նաեւ խմելու ջրի կարեւոր աղբյուր է, այդ թվում՝ Գյումրի քաղաքը երեւի մոտ 95 տոկոսով ապահովող: Կատարվող գնահատումից ու վերլուծությունից հետո մենք կունենանք պլանավորման ընդհանուր տարածքի կենսաֆիզիկական քարտեզ, որը կարացուի առաջարկվող մոտեցումներն ըստ տարբեր ոլորտների: Դա ըստ էության կլինի բազմաշերտ աշխարհագրական տեղեկատվության համակարգ՝ իր պարունակած հիմնարար տեղեկություններով օգտակար նաեւ մարզի պլանավորման աշխատանքներում ներգրավված պետական կառույցների համար:

Կարեւոր է նշել, որ սա մասնակցային գործընթաց է. այս աշխատանքները կատարելու համար ձեւավորվել են 4 աշխատանքային խմբեր՝ իրենց կազմում ներառելով բնապահպանության նախարարության եւ մեծ մասամբ մարզային կառույցների ու այդ գոտու համայնքների ներկայացուցիչներ: Տարածքային ինտեգրված պլանավորման այս գործընթացի սկիզբը դրվել է հոկտեմբերի 7-10 մոտ 100 մասնակիցներով տեղի ունեցած խորհրդաժողովով, որտեղ ներկայացված ցանկությունների համադրմամբ ձեւավորվեց պլանավորման ողջ տարածքի երկարաժամկետ՝ մոտ 20 տարվա տեսլականը, ինչպես նաեւ կազմվեցին նշված աշխատանքային խմբերը: Պլանավորման որոշակի աշխատանք կատարվեց նաեւ տարածքում զբոսաշրջության հնարավորությունների գնահատմանը նվիրված օրերս կազմակերպված եռօրյա սեմինարում:

Ազգային պարկի հիմնումը, ինչպես նշվեց, ծրագրի կարեւոր բաղադրիչն է: Դա կլինի ծրագրի շոշափելի արդյունքը: Պրն Սիլվենն ընդգծեց, որ շատ կարեւոր է պարկը եւս դիտարկել հողօգտագործման պլանավորվող մոտեցումների համատեքստում, որ այնտեղ նախատեսվող ամեն ինչը վերջինիս համահունչ ու ներդաշնակ լինի: Արդեն սկսվել է նաեւ բուն պարկի ձեւավորման մասնակցային գործընթացը: Ելնելով մինչեւ հիմա կատարված էկոլոգիական ուսումնասիրության արդյունքներից, իրենք մշակել են ազգային պարկի սահմանների նախնական մի նախագիծ, նաեւ նախանշվել են այդ նախագծով պարկին սահմանակցող համայնքները: Իրականացված տեղեկատվական արշավի շրջանակներում վերջիններիս բնակչության շրջանում նախապես որոշակի բացատրական աշխատանք կատարվել է: Իսկ այդ համայնքների ներկայացուցիչների մասնակցությամբ օրեր առաջ կազմակերպված եւս մի խորհրդաժողովում համատեղ աշխատանքի արդյունքով ձեւավորվել են պարկի ընդհանուր տեսլականը եւ աշխատանքային խմբեր, որոնք հենց պետք է զբաղվեն պարկի սահմանները որոշելու, աջակցության գոտու զարգացման ծրագրի մշակման գործնական խնդիրներով: Ինչպես պահպանման ողջ պլանավորվող տարածքի, այնպես էլ ազգային պարկի ձեւավորման խնդիրներով զբաղվող աշխատանքային խմբերը պետք է աշխատեն մինչեւ 2009-ի մարտի վերջը, իսկ ապրիլի վերջին այդ աշխատանքները ի մի են բերվելու:

«Որքան ինձ հայտնի է, սա Հայաստանում այս կարգի առաջին ծրագիրն է, երբ համայնքի մարդիկ ընդգրկվում են պահպանման ողջ տարածքի եւ ազգային պարկի ձեւավորման, պլանավորման գործընթացում,- զրույցի վերջում ասաց ծրագրի ղեկավարը:- Մենք հույս ունենք մասնակցային գործընթացի միջոցով այդ տարածքների բնակչության շրջանում ստեղծել համաստեփականատիրոջ զգացում, որը պետք է կանխի հետագա հնարավոր կոնֆլիկտները, ասենք, «Ազգային պարկի» պատասխանատուների հետ: Մենք նաեւ հավատացած ենք, որ մեր ծրագրի իրագործումն օգուտ կլինի թե՛ բնությանը, թե՛ մարդկանց»:

ԳԵՂԱՄ ՄԿՐՏՉՅԱՆ

Իսկ մենք ինչպես տեսանք գիշերային Երեւանը

«Ազգի» հոկտեմբերի 22-ի համարում կարդացի Տիգրան Հայրապետյանի «Ինչպես տեսա գիշերային Երեւանը» հոդվածը, որտեղ մոսկվացի երիտասարդը պատմում է մեր մայրաքաղաքի գիշերային կյանքի մասին, հիմնականում դրական գույներով: Եվ անմիջապես հիշեցի անցած ամառ սփյուռքահայ ընկերոջս հետ Երեւանյան մեկ գիշերվա իմ փորձառությունը:

Ի տարբերություն Մոսկվայում ծնված-մեծացած Տիգրան Հայրապետյանի, ԱՄՆ-ում ծնված ընկերս (ի դեպ, նույնպես Տիգրան անունով եւ երկար մազերով), սահուն խոսում է հայերեն, նույնիսկ մի փոքր կարդում (պատճառը երեւի ծնողներն են, որ ժամանակին սովորել են Երեւանի համալսարանում): Գիշերային կյանքի սիրահար, արվեստագետ, հայկական արվեստի երկրպագու Տիգրանն առաջին անգամ էր Հայաստանում: Երեւան էր ժամանել Սիրիայից եւ ոգեւորությամբ պատմում էր Դամասկոսի գիշերային կյանքից: Ես սկզբից էլ նրան զգուշացրի, որ Երեւանում շատ չկան գիշերային ակումբներ: Չորս-հինգ օր անց նա հեռախոսով ինձ հայտնեց իր հիասթափության մասին, ասելով, որ մի քանի դիսկոտեկ է գնացել, սակայն չի կարողացել ոչ պարել, ոչ ծանոթություններ հաստատել երեւանցի երիտասարդության հետ: Պայմանավորվեցինք նույն երեկոյան հանդիպել: Եվ արդեն մինչեւ ընկերոջս մոտ հասնելը տաքդ տպավորությունները սկսվեցին:

Նախ հանդիպեցի մի ծանոթ աղջկա, որին հինգ տարի չէի տեսել: Նրա հագնվածքը զարմանալի թվաց: Գյուղից էր այդ աղջիկը, ինձնից մի քանի կուրս ցածր:

- Աշխատում ե՞ս,- հարցրեցի:

- Հա, հյուրանոցում:

- Ի՞նչ ես անում:

- Լավ, մթամ չհասկացար,- ասաց նա իր կարմրելով:

- Իսկ գոհ ե՞ս:

- Չէ, գործ չկա,- ասաց ծանոթուհիս,- հիմա մեծ մասը ջահել տղաներ հեռուից են վազում...

Դա ինձ համար անակնկալ չէր, բայց եւ այնպես մի փոքր ցնցող էր:

Հասա ամերիկահայ ընկերոջս: Գնացինք, նստեցինք մի գիշերային ակումբում, որտեղ չնայած պարեղանակներ էին հնչում, բայց ընդամենը մի տղա ու աղջիկ էին պարում, մյուսները միայն նայում էին: Գարեջրի շշերի մոտ էլ Տիգրանը սկսեց պատմել իր երեւանյան օրերի փորձառության մասին:

«Ինձ երեւի գեյի տեղ են դնում երկար մազերիս պատճառով: Երեկ ցերեկը Աբովյանով իջնում էի, մի խումբ 18-20 տարեկան տղաներ էին կանգնած: Նրանցից մեկը ուղիղ աչքերիս մեջ նայեց: Մի տաքը քայլ հազիվ էի արել, երբ այդ խմբից մի տղա վազելով հասավ հետեւիցս, ուսով խփեց ուսիս ու բղավեց. «Հլը քեզ կարգին պահի, չես կարո՞ւմ հանգիստ քայլես»: Ես հասկացա, որ ինձ շանտաժի են ենթարկում, մանավանդ նկատեցի, որ մեր հետեւից գալիս են մնացած տղաները: «Օքեյ», ասացի ժպտալով: «Օքեյը դու ես», ասաց տղան: Չշարունակելու համար՝ մայթս փոխեցի»:

Եվ ներկայացրեց ծանոթ իրավիճակներ, թե ինչպես հուշանվերներ վաճառողներն ու տաքսիստները հենց իմանում են, որ ինքն արտասահմանից է, ավել փող են ուզում, ցերեկը փողոցներում հանգիստ չեն տալիս մուրացկանները, չնայած հայկական գինու համբավին՝ այդ երեք օրում ոչ մի տեղ չի հաջողվել չթթված գինի ճաշակել, պատկերասրահի աշխատող տաքիկները շատ կոպիտ են, իսկ փողոց անցնելիս ամեն անգամ իրեն թվում է, թե կյանքին հիմա հրաժեշտ է տալու:

«Երեկ ինձ էջմիածին տարած տաքսիստը կյանքը պատմեց, ու ես չեմ հասկանում, թե ինչպես է կարողանում դեռ երկու ոտքի վրա կանգնել այդ մարդը,- շարունակում է ընկերս: -Բարձրագույն կրթություն ունի, բայց քանի տարի ստիպված մեքենա է քշում: Բանկում դրած փողերը մի օրում թղթի կտոր են դարձել: Երեք տղայի հայր է եղել, մեկը զոհվել է Ղարաբաղում, մեկին Մոսկվայում ծեծել-սպանել են, երրորդն էլ գործազուրկ է, 30 տարեկանում դեռ հոր ձեռքին է նայում: Եղբայրը երկրպագի է, մարտի 1-ին բանտարկել են, մի ամսից ազատ են արձակել, տեսել է, որ ձեռքից առել են իր օբյեկտը, մեքենան, հեռախոսը: Ատամները թափված էին, փող չունի, որ սարքել տա», ասաց զգայուն ընկերս ու փղձկաց:

Տիգրանը բողոքի գիրք չէ, ոչ էլ շփացած, բայց վրա-վրա այդ հինգ օրում տեսած բաներ շատ էին կատարվել: «Ափսոս մեր սիրուն երկիրը, մեր խեղճ ժողովուրդը, որ այս օրն են գցել», անընդհատ ասում էր նա:

«Գեղեցիկ է գիշերային Երեւանը, լուսառատ, համեմված էլեկտրոնային գովազդներով», գրել է Տիգրան Հայրապետյանը վերոհիշյալ հոդվածում: Այո, բայց դա վերաբերում է միայն կենտրոնին: Մի փոքր թեքվեցիր կենտրոնից, ընկնում ես քանդուքարափ փողոցները, խավար եւ աղբատ:

Խանջյանի փողոցի կողմերում երկու վուլգար պրչված գիշերային թիթեռնիկ մեզ «հելլո» ասացին: Տիգրանն ասաց. «Ես շատ կուզեի երեւանցի աղջկա հետ գիշեր անցկացնել, բայց ոչ սրանց նմանների: Բայց այստեղի բարերում հասկացա, որ գրեթե անհնար է նման հանդիպումներ ունենալ»:

Բարձրացանք Չարենցի փողոց, որը դեռ փակ էր. գիշերվա ժամը մեկին մի մեքենա թափով սլանում էր եւ կտրուկ շրջադարձ կատարում, նորից կատաղի հետ քշում ու կրկին շրջադարձ անում: Կարծես հոլիվուդյան կինո լիներ: Թվում էր, թե ուր որ է մայթ կթռչի: Ես ու ընկերս պուկ տված փախանք շեմքերից մեկի բակը: Ես դեռ ոչինչ, բայց ընկերս իսկական շոկի մեջ ընկավ եւ անընդհատ կրկնում էր շ եւ $ տառերով սկսվող անգլերեն հայհոյանքի միավանկ բառերը: Հետո կանգնեցինք տիպիկ երեւանյան պրոբլեմի առաջ՝ այդքան գարեջուր խմելուց հետո մարդ ուզում է զուգարան գնալ, բայց դրանք մեր քաղաքում դեֆիցիտ են: Ընկերս էլ չդիմացավ, հարցերը լուծեց մի անկյունում...

Երկուսս է լուռ էինք: Վերջապես Տիգրանին ճանապարհեցի տուն (որը նա վարձել էր մի մասնավոր հյուրանոցային ծառայության գրասենյակից, բայց բնակարանի պայմաններն ու վարձը իրար չէին համապատասխանում), հետը մտա շենքի մուտք, մի տիպ անակնկալ էլ այստեղ էր սպասում՝ մի ծեր, գարշահոտ բոմժ նստել էր աստիճաններին: Եվ դա կենտրոնի շենքերից մեկում, որի մուտքի դուռը չի կողպվում:

Գնացի օթեւանի կանգառ, որ 200 դրամանոց երթուղայինով տուն վերադառնամ. մոտս ընդամենը 500 դրամ էր մնացել, քանի որ տանտիրոջ իրավունքով ես էի հյուրասիրում ընկերոջս: Նստեցի երթուղային, իջա մեր արվարձանում, մեր փողոցից երեք փողոց այն կողմ: Բայց ուզեցի կարճ ճանապարհով տուն հասնել, ի՞նչ տարբերություն, կիսամութ ու քանդված փողոցի փոխարեն կիսամութ ու քանդված բակերով ճանապարհն ընտրեցի: Մեկ էլ որտեղից որտեղ երկու գամփռ շուն հաչելով վրա տվին: Ես ինչքան ուժ ունեի, հավաքեցի ու գոռգոռալով վազեցի, ինձ գցեցի փողոց: Մի տաքսի գնում էր փողոցի ծայրին գտնվող մեր շենքի ուղղությամբ: Կանգնեցրի, ինձ գցեցի վարորդի կողքին ու շնչակտուր ասացի.

- Վարպետ, մեր տունն էս փողոցի ծերին է, նոր ինձ վրա շներ հարձակվեցին, վախենում եմ ոտով շարունակեմ, մոտս էլ 300 դրամ է մնացել...

Տարեց վարպետը բութն ու ցուցամատը տնկեց ու ասաց.

- Ջե՞ռ ես առնում, արա, քեզ 300 դրամով որ տանեմ, մինիմումը 600 դրամ է, ուրեմն էն մնացած 300-ը ես իմ ջեբից պտի դնեմ...

- Բայց դու էդ ճամփով ես գնում, չէ՞,- բռնկվեցի ես,- ... քեզնից ի՞նչ է գնում, էս 400 մետր տեղի համար 300 դրամ կստանայիր, մարդկությունը լրիվ վերացե՞լ է...

- Արա, շատ մի խոսա, հել գնա, ես ստեղ քո ծառան չեմ,- ասաց տաքսիստը, որից տհաճ հոտ էր գալիս:

Դառնացած դուրս եկա մեքենայից՝ շրխկացնելով դուռը, տաքսիստը հանգիստ շարունակեց ճամփան՝ մի ակնթարթում հայտնվելով հեռվում երեւացող մեր շենքին, որին ես հասա վեց-յոթ րոպեից՝ դողը ուրտումս, ամեն րոպե վախենալով, թե նորից շներ կհարձակվեն:

Էլի լավ էր, որ ամերիկահայ Տիգրանն ինձ հետ չէր... Եվ ինչ լավ է, որ Երեւանի ոչ բոլոր տաքսիստներն են այդպիսին, վկա՝ մոսկվացի Տիգրանի հոդվածում հիշված վարորդները, որոնք նույնիսկ փող չեն վերցրել, իսկ սա...

Տիգրան Հայրապետյանն իր հոդվածն ավարտել էր այսպես. «Գիշերային տպավորություններս ուժեղ էին: Փովեցի անկողնին ու մեռելի պես քուն մտա»:

Իմ գիշերային տպավորությունները էլ ուժեղ էին: Փովեցի անկողնին, բայց քուն մտնել չկարողացա...

ՎԱՀԵ ՍԻՄՈՆՅԱՆ

ԼՈՒՅՍ
31 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2008 ԷՋ Ա

ՀԱՎԵԼՎԱԾ

ԿԻՆՈ

Զավախքում երկար էին սպասել իրենց «Պոետի վերադարձին»

«ՎիվաՍել» ընկերության հովանավորությամբ հոկտեմբերի 23-26-ը Զավախքում առաջին անգամ անցկացվեց «Ոսկե ծիրանը անիվների վրա» փառատոնը, որը ջավախեցիների կյանքում սպասված իրողություն էր, հրաշալի առիթ՝ հանդիպելու Ախալքալաքում ծնված Հարություն Խաչատրյանին ու դիտելու նրա «Պոետի վերադարձը» ֆիլմը՝ պատելի աստուծ Զիվանու եւ առհասարակ հայրենի եզերից հեռացած տաղանդավոր արվեստագետների արժեւորման մասին:

Կադր «Պոետի վերադարձը» ֆիլմից

«Զավախքում աստուծ Զիվանու մասին ֆիլմ ցուցադրելը շատ պատասխանատու է. ընդհանրապես իմ ֆիլմերի ցուցադրության ժամանակ շատ եմ հուզվում, բայց այսօր ավելի անհանգիստ եմ: «Պոետի վերադարձը» 2006-ին նկարահանելուց հետո մտածում էի, որ առաջին ցուցադրությունը պետք է լինի Զավախքում, պատրաստվել էի դրան, բայց արդեն 2 տարի ֆիլմը շրջում է տարբեր կինոփառատոներում ու վերջապես հասավ Զավախք: Շատ ջավախեցիներ են նկարահանվել այս ֆիլմում, աստուծ Զիվանուն այստեղ բոլորն են սիրում, համարում են իրենց սրբություններից մեկը, չկա մի ընտանիք, որտեղ չինչեն Զիվանու երգերը, պոեզիան: Ֆիլմում Զիվանին ընդհանրական կերպարն է տաղանդաշատ այն արվեստագետների, ովքեր գնացել են Զավախքից, ստեղծել են իրենց արվեստն ու միշտ երազել վերադառնալու մասին, բայց այդպես էլ մնացել են հայրենի

տնից հեռու: Ֆիլմը վերադարձն է Զիվանու, Վահան Տերյանի, Դերենիկ Դեմիրճյանի ու ջավախեցի բոլոր այն արվեստագետների, որոնք իրենց տաղանդի սերմերը տարածել են աշխարհով մեկ, բայց հայրենիքում տեղ չեն ունեցել: Իմ ֆիլմում Զիվանին վերադառնում է ու տեսնում, որ մարդիկ հիշում են իր երգերը, բայց ինքն այլեւս պետք չէ նրանց, ամեն մեկն իր առօրյա հոգսով ու ցավով է ապրում, այսինքն՝ ոչ մի արվեստագետ տեղ չունի իր հողում, վերադառնալու տեղ չունի», Ախալքալաքի մշակույթի տան դահլիճում ֆիլմի ցուցադրությունից առաջ ասաց Հարություն Խաչատրյանը:

Դահլիճում ցուրտ էր, բայց գրեթե սովոր ջավախեցիները գալիս էին դիտելու հայ եւ վրացի կինոբեմադրիչների նոր ֆիլմերը՝ Աննա Մելիքյանի «Ջրահարսը», Դիանա Մկրտչյանի «Գաթան», Վիգեն Չալդրանյանի «Քոմոտին», Իրակլի Շավլիաշվիլու «Մեսաղադամը», Իրակլի Մեսրեւելու «Թզենին», Լեւան Կողուաշվիլու «Պարտը», Իռենե Գաչեչիլաձեի «Խնձորը», Վանո Բուրդուլու «Գրաֆիտտին», Դիտո Ցինցաձեի «Reverse» -ը:

«Մեզ համար շատ կարեւոր է հայ կինոբեմադրիչների ֆիլմերը տարբեր քաղաքներում ցուցադրելը, այդ գործը մեծ հաճույքով անում է նաեւ Հայաստանի ազգային կինոկենտրոնը: «Ոսկե ծիրանը» սկսվեց Շուշիում, տարածվեց Գյումրիում, հիմա եկավ Զավախք, որտեղ կա մի յուրօրինակություն՝ փառատոնն անցկացվում է Վրաստանի կինոկենտրոնի հետ, ցուցադրվում են վրացական ու հայկական կինոփառատոների ծրագրերում ընդգրկված ֆիլմերը: Փառատոնը մեծ հետաքրքրություն է առաջացնում վրացիների եւ հայերի շրջանում, որովհետեւ վրացական կինոյի հետ կապը երկար ժամանակ կորցրել էինք: Վերահաստատումը սկսեցինք Զավախքում, կշարունակենք Թբիլիսիում, իսկ վրացական կինոկենտրոնը Երեւան կբերի հայրենի արտադրության նոր ֆիլմերը», հավելեց Հարություն Խաչատրյանը:

Վրաստանի կինոկենտրոնի նախագահ Կոստե Չլեիձեն նշեց, որ «Ոսկե ծիրանն» արդեն մեծ հեղինակություն ունի տարածաշրջանում եւ շարունակում է զարգանալ՝ ընդլայնելով տարածաշրջանային եւ եվրոպական համագործակցության սահմանները:

Հայաստանում Վրաստանի դեսպանի դուստրը՝ Իռենե Գաչեչիլաձեն նույնպես «Ոսկե ծիրանը» համարեց արտակարգ երեւույթ՝ զարգացման մեծ հնարավորություններով. «Ինձ համար չափազանց կարեւոր է մեր երկու երկրների բարեկամությունը, որի ամրապնդման հիմքերից մեկը, անկասկած, կարող է լինել «Ոսկե ծիրանը»: Պարզապես պետք է միասին աշխատել»:

Հոկտեմբերի 25-ին Ախալքալաք այցելեց նաեւ Վրաստանի առաջին տիկին Սանդրա Ռուլոֆսը: Ասպինձայում կազմակերպված «Շոթաոբա» տոնին մասնակցելուց առաջ նա եկավ դիտելու «Դեմիրճյան» գեղարվեստի դպրոցում բացված հայ նկարիչների աշխատանքների ցուցահանդեսը: «Մենք պետք է լավ ճանաչենք վրացական եւ հայկական արվեստի տարբեր ոլորտները՝ գեղանկարչություն, կինո, երաժշտություն: «Ոսկե ծիրանն» այստեղ ցուցադրում է հայկական ու վրացական ֆիլմեր, եւ ես շնորհակալություն եմ հայտնում Զավախքում նման փառատոն անցկացնելու նախաձեռնության համար», ասաց նա: Մշակույթի տանը տկն. Ռուլոֆսը հետաքրքրությամբ դիտեց «Փարաջանովի աշխարհը» լուսանկարչական ցուցահանդեսը, որն Ախալքալաք էր բերել Փարաջանովի թանգարանի տնօրեն Զավեն Սարգսյանը. «Լուսանկարները այս տարի ցուցադրվել են Իտալիայում, Գերմանիայում, Ռիգայում: Ուրախ եմ, որ այժմ եկավ Ախալքալաք եւ ժողովուրդն այստեղ հնարավորություն ունեցավ դրանք դիտելու: Այստեղ, իրոք, մեծ սեր ու ծարավ կա արվեստի նկատմամբ»:

Ախալքալաքի գեղարվեստի դպրոցը հիմնել է գեղանկարիչ Կառլեն Կարապետյանը: Երեւանի Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի նկարչության բաժինն ավարտելուց հետո վերադարձել է հայրենի քաղաք եւ նկարչության խմբակ ստեղծել Հովի. Թումանյանի անվան դպրոցում: «Իմ սաներից էր նաեւ Հարություն Խաչատրյանը, որն, իհարկե, նկարիչ չդարձավ, բայց դա փոխարեն հայտնի կինոբեմադրիչ է, փառատոնի տնօրեն եւ հիմա Զավախքում բարձր տրամադրություն է ստեղծել՝ աստուծ Զիվանուն նվիրված իր ֆիլմն առաջին անգամ մեզ ներկայացնելով: Ասեմ, որ ես էլ եմ նկարահանվել այդ ֆիլմում», ասաց Կառլեն Կարապետյանը, որին Հարություն Խաչատրյանը դիմում էր «Հարգելի» կոչելով, քանի որ Զավախքում ուսուցիչներին այդպես են դիմում:

Գեղարվեստի դպրոցը նա հիմնել է մեծ դժվարությամբ, ունեցել է շնորհաշատ սաներ, որոնց աշխատանքները ցուցադրվել են Վրաստանում, Կանադայում, Մ.Նահանգներում եւ այլուր: Նրանցից ոմանք Հայաստանում ուսանելուց հետո վերադարձել ու դասավանդում են դպրոցում՝ անտրտունջ դիմանալով նյութական դժվար կացությանն ու պայմանների խեղճությանը: Դպրոցը նույնիսկ աթոռներ չունի, ուսուցիչները նստում են զինվորների աթոռների վրա:

«Վրաստանում այսպիսի դպրոց գոյություն չունի: Մեզ ոչ ոք չի հովանավորում, ապրում ենք միայն չոր աշխատավարձով: Մեր սաների աշխատանքները բազմիցս ցուցադրվել են Թբիլիսիում, Մոնրեալում եւ այլ քաղաքներում, բայց ոչ Երեւանում: Կարող եմ ասել, որ Հայաստանից ոչ ոք այստեղ դեռ չի դրել: Վրաստանից շատերն են գալիս, գրեթե բոլոր դեսպանները եղել են մեր դպրոցում, բայց Հայաստանից ոչ ոք չի եկել: Հայաստանում կա ջավախեցիների «Հզոր հայրենիք» կուսակցություն, որն ամեն տարի Զավախքում անցկացնում է տեղական եւ ջիվանական օրեր: Գալիս են, տոնախմբություն անում ու գնում, եւ ոչ մի անգամ մեր դպրոց չեն մտնում: Այս տարի Դիլիջանում հանդիպեցի մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանին, ասացի, որ տաղանդավոր նկարիչներ ունենք, որոնցից ոմանք շատ ավելի արժեքավոր աշխատանքներ ունեն, քան հայաստանցի նկարիչները, բայց, ցավոք, նկատում են նկարում: Նա պատասխանեց, որ մենք ուրիշ պետության մեջ ենք ապրում եւ իրենք մեր գործերին չեն խառնվում: Մեզ անհասկանալի է, որ տարբեր երկրներից կարելի է ցուցահանդես տանել Հայաստան, իսկ Վրաստանից՝ ոչ:

Մեր սաներն այսօր շատ էին ոգեւորվել Վրաստանի նախագահի տիկնոջ այցից: Նա առաջին անգամ էր այցելում մեզ եւ մեծ հիացմունքով խոսեց մեր դպրոցի՝ եւ ցուցադրված նկարների մասին: Մեր դպրոցը կարելի է գեղարվեստի կենտրոն հպմարել, որովհետեւ արտասահմանից եկած հյուրերին վրացիները միշտ այստեղ են բերում: Իհարկե, գալիս են նաեւ սփյուռքահայերը:

Մեր նպատակն է, որ մեր սաների աշխատանքները ցուցադրվեն Երեւանում: Հույս ունենք, մի օր կիրականանա: Մեր ուժը մեր միասնության մեջ է, եթե Հայաստանը ուժեղ լինի, մենք էլ ուժեղ կլինենք», ասաց Կառլեն Կարապետյանը:

Դպրոցի սաները սովորում են նաեւ դեկորատիվ արվեստ: Բնատուր շնորհով օժտված իրենց ուսուցչուհու՝ Հայկանուշ Աղամալյանի հետ նրանք ստեղծում են հուշանվեր զարդեր, այնքան նրբին, ասես մաս չի դիպչել: Այս դպրոցի սաներից է եղել նաեւ Լիլիթ Ավետիսյանը, որը 2003-ին չբացահայտված պատճառով սպանվեց Երեւանում: Նրա լուսանկարը փակցված էր Կառլեն Կարապետյանի աշխատասենյակում, հագին՝ իր իսկ գործած հայկական զարդանախշերով ժակետը: 23-ամյա Լիլիթը երազում էր նոր խոսք ասել հայկական նորաձեւության մեջ, բայց, ավա՜ղ...

Գեղարվեստի այս դպրոցն անվանում են նաեւ Զավախքի պատկերասրահ: Ուսուցիչներն ասում են, որ բազմաշնորհ բազում սաներ ունեն, բայց՝ ոչ մի հովանավոր: Զավախքում արտակարգ մարդիկ են ապրում, սակայն աշխատանք չունենալու պատճառով հեռանում են այնտեղից:

Ախալքալաքի քաղաքապետարանի խորհրդի նախագահ Խաչատուր Այվազյանն ասում է, որ գեղարվեստի դպրոցը վերանորոգելու համար բյուջեից հատկացվել է 12 հազար դոլար: Մշակույթի զարգացման համար նույնպես գումար է հատկացվել եւ մոտակա օրերին քաղաքում կբացվի Զիվանու անվան դպրոցը: Այս տարի վերանորոգվել է մշակույթի տան տանիքը, հաջորդ տարի կբարեկարգվի շենքի ներսը, կստեղծվեն լավ պայմաններ: «Վրացիների կողմից խոչընդոտներ չկան, ապրում 2 տարի այս պաշտոնում եմ եւ անկեղծորեն ասում եմ, որ ոչ մեկը մեզ չի նեղում: Եթե միաբան լինենք, համերաշխություն կլինի: Հիմա հակասություններ չկան, առաջ մեր գործերին միջամտում էին Թբիլիսիից, Երեւանից, իսկ հիմա ոչ մեկին թույլ չենք տալիս մեր կյանքին խառնվել», ասաց Այվազյանը:

ՌՈՒԶԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ
Ախալքալաք -Երեւան

Հարություն Խաչատրյանը եւ Սանդրա Ռուլոֆսը

Գեղարվեստի դպրոցը



Հարություն Խաչատրյանը եւ Իռենե Գաչեչիլաձեն

Հարցազրույց

Բրիտանացի անվանի կինոբեմադրիչ Ալան Փարքերը հաջողությամբ ափսառում է ինչպես հայրենիքում, այնպես էլ Հոլիվուդում: Նրա ճանաչված ֆիլմերից մի քանիսը՝ «Պասը», «Էվիտան», «Փառքը», կապված են երաժշտական ափսարհի հետ: Իրական պատմության հենքի վրա նկարահանված «Կեսգիշերային ճեղքնքաց» ֆիլմը՝ թուրքական բանտում հայտնված երիտասարդ բրիտանացու մասին, արժանացել է «Օսկար» մրցանակի՝ «լավագույն ֆիլմ» եւ «լավագույն ռեժիսոր» անվանակարգերում: Նա նկարահանել է նաեւ «Հրեշտակի սիրը», «Միսիսիպիի կրակի մեջ», «Դեւիդ Գեյլի կյանքը» ֆիլմերը: Ներկայումս ափսառում է «Սառույց ափսարհի ընդերքում» ֆիլմի վրա, որն էկրան դուրս կգա 2010-ին: Ալան Փարքերը վերջերս պատասխանել է BBC-ի ընթերցողների հարցերին:

Կինոբեմադրիչ Ալան Փարքեր

«Ամենից առաջ պետք է մնալ ինքդ քեզ»

Ամենից հավատարիմ

- Ձեր «Պասը» եւ «Կեսգիշերային ճեղքնքաց» ֆիլմերը ժամանակին ուժեղ ներգործություն են ունեցել մարդկանց վրա ու ձեւավորել են մի ամբողջ սերունդ: «Կեսգիշերային ճեղքնքացը» թեպետ հիմնված է իրական փաստերի վրա, սակայն գրոտեսկային եւ աղավաղված է ներկայացնում 70-ականների Թուրքիան: Նպատակ ունե՞ք այդպիսի ֆիլմ ստեղծել, օրինակ, Աբու Ղրեյբի կամ Գուանտանամոյի գերիների մասին:

- Ոչ, այդպիսի պլաններ չունեմ: «Կեսգիշերային ճեղքնքացը» նկարահանելը դյուրին գործ չէր: Այդպիսի ֆիլմ ստեղծելիս ասես ինքդ հայտնված լինես բանտում, հենց այդ պատճառով ցանկություն չունեմ եւ մեկ բանտային ֆիլմ ստեղծելու: Աբու Ղրեյբը եւ Գուանտանամոն շատ կարեւոր թեմաներ են կինոյի համար, եւ շատ ռեժիսորներ արդեն անդրադարձել են դրանց: Չեմ կարծում, որ «Կեսգիշերային ճեղքնքացը» իրականությունը պատկերում է գրոտեսկային եւ աղավաղված, դա ընդամենը կինոյի հզոր ուժն է, որը թույլ է տալիս նպատակիդ հասնելու համար օգտագործել դրամատիկ բոլոր միջոցները:

- Ինչո՞ւ ժամանակակից ինտելեկտուալ կինոն չի հասնում մասսայական հանդիսատեսին: Մի՞թե Անտոնիոնիի, Տարկովսկու, Բերգմանի կինոարվեստի մակարդակի ֆիլմերն այլեւս չեն հետաքրքրում կինոդիտողին:

- Դա, իրոք, ցավալի երեւույթ է, որը կապված է կինոկրթության հետ: Բայց կինոարվեստի գրավչությունն այն է, որ արվեստագետները կարողանան ինքնարտահայտվել տարբեր ձեւերով: Իրականում մասսակայան հանդիսատեսը՝ Մինսկում, թե Չիկագոյում, արդեն վարժվել է, որ իր հետ շփումը պետք է լինի շատ ավելի ուղիղ ու նվազ ինտելեկտուալ, քան Տարկովսկու կամ Բերգմանի ֆիլմերը դիտելիս: Ամերիկյան կինոն մասսայական հանդիսատեսի համար է, եւ այսօրվա հանրությունը, հատկապես երիտասարդությունը, դաստիարակված է YouTube-ով ու MTV-ով, եւ պատրաստ չէ ընկալելու հանդարտ, ոմանց համար նույնիսկ ձանձրալի արտահայտման ձեւը, որին դիմում են Բերգմանը եւ Տարկովսկին: Նրանց ֆիլմերի թեմաները շատ փիչ ընդհանրություն ունեն համակարգչային խաղեր նախընտրող երիտասարդների գիտակցության հետ: Մյուս կողմից ֆիլմեր են նկարահանվում, որպեսզի ինտելեկտուալ փորձամասնությունը բավականություն ստանա կինոթատրոններում: Ամենից դժվարը այնպիսի ֆիլմ ստեղծելն է, որն ամբողջական լինի ինտելեկտուալ, հասարակական եւ ստեղծագործական առումներով եւ միաժամանակ հոգեմոտ լինի մասսայական հանդիսատեսին:

- Երբ սկսում եք ֆիլմ նկարահանել, մտածո՞ւմ եք, թե ինչքա՞ն եկամուտ կբերի այն, թե՞ ձեզ ավելի շատ հետաքրքրում է ֆինանսների կարծիքը:

-Ամենից առաջ պետք է հավատարիմ մնալ ինքդ քեզ, այն ամենին, ինչ ուզում ես ասել: Ֆիլմ նկարահանելու ժամանակ ֆինանսների մասին մտածելը ինձ շատ ու շատ վտանգավոր է թվում: Իհարկե, հրաշալի է, եթե ֆիլմդ նրանց դուր է գալիս, բայց ֆինանսներն այնքան հաճախ են սխալվում, որ չի կարելի նրանց համարել հուսալի բարոմետր: Քննադատությունը տարբեր երկրներում նույնը չէ, եւ դա վտանգավոր է դարձնում ֆինանսների կարծիքների վրա հիմնվելը: Կարեւորը հիշելն է, որ ֆիլմը գոյություն ունի ոչ թե արկղում դրված ժապավենի կամ DVD -ի վրա, այլ այն ժամանակ, երբ հայտնվում է էկրանի վրա եւ ընկալելի է հանդիսատեսին: Ահա թե ինչու, երբեք չի կարելի անտեսել մութ դահլիճում նստած հանդիսատեսի պահանջները, զգացումները եւ սպասումները:

Կադր «Էվիտա» ֆիլմից

-Ձեր ֆիլմերի մեծ մասը հոռետեսական է, ինչի՞ց է բխում այդքան խորը հոռետեսությունը:

-Ես ինձ հոռետես չեմ համարում: Ընդհակառակը, իմ ֆիլմերի մեծ մասը լավատեսական է: Իհարկե, հարկավոր է ուսումնասիրել կյանքի մռայլ, դաժան կողմերը, մարդկային փխրուն զգացմունքները, սուտն ու կեղծիքը, որի մեջ մարդիկ հաճախ են անցկացնում իրենց կյանքը: Դա հետաքրքրական է դրամատիկ առումով, եւ ուժեղացնում է ֆիլմի գեղարվեստական արժեքը: Վերջնահաշվով, այդպիսի ֆիլմերն ունեն մաքրագործող հատկություն եւ ցույց են տալիս մարդկային հոգու հաղթությունը: Համենայնդեպս, ես հավատում եմ դրան:

-Հավատո՞ւմ եք, որ այդպիսի կինոն կարող է փոխել մարդկանց գիտակցությունը: Արդի կինոարվեստը ո՞ւնի այդ հնարավորությունը:

- Ամեն անգամ, երբ սկսում ես ֆիլմ նկարահանել, հույս ես փայփայում, որ մարդիկ կճանաչեն այն, եւ գուցե քեզ կհաջողվի փոխել նրանց ափսարհընկալումը: Լավ ֆիլմերը որպես կանոն, մեզ ինչ-որ բան են ասում ափսարհի մասին: Ֆիլմ դառնալուց առաջ «Պասը» հաջողված ալբոմ էր, ներգործել էր շատերի վրա: Այն ազդեցիկ եւ արդիական է նաեւ այսօր՝ 27 տարի անց:

- Սառը պատերազմի պատը փլուզվե՞լ է, թե դա ընդամենը խաբկա՞նք է, երեւակայության արդյունք: Այսօր տեսնում ենք, թե ինչպես է նոր պատ կառուցվում: Երկյուղը պատ է ստեղծում եւ ինչ-որ մեկին շահեկան է թշնամու կերպար ունենալը: Ի՞նչ կարող ենք անել:

- Համաձայն եմ ձեզ հետ, բայց բոլոր դեպքերում ես հավատում եմ մարդու շփվելու կարողությանը: Նոր տեխնոլոգիաները ափսարհը շատ են մոտեցրել մեզ, հասանելի դարձրել բոլոր նորությունները, կարծիքները, նաեւ հնարավորություն տվել դրանք քննարկելու եւ վերլուծելու:

Վտանգավոր կարծրատիպերը պետք է ջարդել միայն կրթությամբ, ազատ գաղափարներով, մարդկային փոխհարաբերություններով եւ անկախ լրատվամիջոցներով:

Պատրաստեց
ՌՈՒԶԱՆ ՊՈՂՈՍՅԱՆԸ

Կադր «Փառքը» ֆիլմից

Կինոբեմադրիչ Գագիկ Կարագյոզյանի «Կապույտ գիրքը»

Լոնդոնի «Սնի Սաունդս» ֆիլմարտադրող ընկերությունում նկարահանվել է «Կապույտ գիրք» (The Blue Book) վավերագրական ֆիլմը, որը ռեժիսոր Գագիկ Կարագյոզյանի առաջին ափսառանքն է: Նրա հետ զրուցել է «Արմինյն միրոր սփեքթեյթր» շաբաթաթերթի թղթակից Նորա Ոսպիկյանը:

- Ինչի՞ մասին է «Կապույտ գիրքը»:

- Ֆիլմը պատմում է Հայոց ցեղասպանությունը ճանաչելու թուրքական ժխտողական քաղաքականության դեմ պատմաբան Արա Սարաֆյանի ջանքերի մասին:

- Ի՞նչը պատճառ դարձավ նկարահանելու ֆիլմը:

- 2005-ին Սարաֆյանն ինձ պատմեց, որ Թուրքիայի խորհրդարանը (Մեծ մեջլիսը) դիմել է Բրիտանիայի խորհրդարանին, որպեսզի վերջինս 1916-ին հրատարակված կապույտ գիրքը՝ «Հայերի հանդեպ վերաբերմունքը Օսմանյան Թուրքիայում 1915-16 թթ.» համարի կեղծիք եւ ոչ վավերական: Մեջլիսի բոլոր անդամները, ներառյալ վարչապետ Էրդողանը, ստորագրել էին այդ կոչի տակ: Այնպես որ, հարցը լուրջ դիմակայության կարիք ուներ, եւ Արա Սարաֆյանը հանձն առավ ապացուցելու հակառակը: Իսկ ես հարմար առիթ գտա հետեւելու նրա ջանքերին եւ նկարահանելու նրա գործունեությունը: Չնայած առաջ էլ հետաքրքրված էի թուրք-հայկական խնդիրներով, բայց միշտ բարդ եւ զգայական եմ համարել այդ թեմաների վերաբերյալ ֆիլմ նկարահանելը: Արայի հետ ափսառանքը ինձ դարձրեց ավելի հավասարակշռված: «Կապույտ գիրքը» շատ լավ «հումք» էր, ֆիլմը բացահայտում է Հայոց ցեղասպանության հետ կապված մի շարք կարեւոր իրողություններ:

- Ինչպե՞ս անցավ լոնդոնյան պրեմիերան:

- Մեծ հաջողություն արձանագրեց: Կինոդահլիճը լիքն էր, թերթերում բազմաթիվ արձագանքներ եղան, հիմնականում գովաբանվեց Արա Սարաֆյանի մոտեցումը հարցի էությանը: Իսկ այդ էությունը, անշուշտ, իրազեկության բարձրացումն էր:

- Ինչ եք կարծում, ընդհանուր առմամբ ֆիլմն ի՞նչ ազդեցություն կունենա:

- Առաջին հերթին ցույց կտա ժխտողականության անհեթեթությունը, քանի որ գոյություն ունեն «Կապույտ գրքի» նման անհերքելի փաստեր: Երկրորդ, հուսով եմ, կնպաստի Սարաֆյանի գործադրած ջանքերի արդարացի ճանաչմանը: Սփյուռքում քիչ բան գիտեն այդ մասին:

- Ինչ կասեք ֆիլմի հետագա ցուցադրումների վերաբերյալ:

- Լոնդոնյան պրեմիերայից հետո ֆիլմը ցուցադրվեց նաեւ Փասադենայում (ԱՄՆ), որին հետեւեցին քննարկումները: Հույս ունեմ ֆիլմը ցուցադրել նաեւ Կանադայում:

Թրգմ. Հ. Ծ.

Դոնաթա Վենդերսի հայկական օրագիրը

Թանկագիններս,

Վերջապես կարող եմ ձեզ ներկայացնել ճանապարհորդական հերթական փոքրիկ ամսագիրը: Այս անգամ ձեզ ողջույններ ենք հղում Հայաստանից: Հայաստա՜ն: Կանադահայ ռեժիսոր Ատոմ Էգոյանն արդեն 5 տարի մեզ սիրով Հայաստան էր հրավիրում՝ մասնակցելու Երևանում անցկացվող «Ոսկե ծիրան» կինոփառատոնին: Մենք շատ էինք ցանկանում տեսնել Հայաստանը եւ այս անգամ որոշեցինք գալ: Վիմը եւ ես շատ քիչ գիտեինք Հայաստանի մասին: Կարդացինք այն ամենը, ինչ հնարավոր էր գտնել ուղեցույց - գրքույկում ու պարզեցինք, որ Հայաստանի մայրաքաղաքը Երեւանն է, երկիրը գտնվում է Իրանի, Ադրբեջանի, Վրաստանի եւ Թուրքիայի միջեւ: Ի՞նչ լեզվով են նրանք խոսում: Հայերեն: Ո՞րն է նրանց կրոնը: Հայաստանն աշխարհում առաջին երկիրն է, որն ընդունել է քրիստոնեությունը եւ մինչ օրս այստեղ ապրողները բացառապես քրիստոնյաներ են: Ինչպիսի՞ն է այս երկիրը, մարդիկ: Ինչպե՞ս են հագնվում, ի՞նչ են ուտում, ինչպե՞ս են ապրում: Օ՜, այս ամենը մենք դեռ պետք է պարզեինք:

Չվացուցակից արդեն պարզ էր, որ սա այն վայրը չէ, ուր շատ մարդիկ են մեկնում: Ժամանեցինք 3:35 -ին: Այնքան էլ հարմար ժամ չէր օդանավակայանում մեզ դիմավորողների համար:

Այսպիսով, մեր առաջին տպավորությունը գիշերային Երեւանից էր: Հաջորդ օրն արդեն գնացինք հայկական եկեղեցի՝ մասնակցելու Ծիրանօրհնեքի արարողությանը: Քահանան եւ ծխական համայնքի անդամները մաղթանքներ հղեցին, բոլորս օրհնություն ստացանք, քանի որ կինոն տարվա մշակութային պտուղն է համարվում: Արարողությունից հետո «Ոսկե ծիրան» կինոփառատոնը համարվեց բացված:

Հետո գնացինք Փարաջանովի թանգարան: Սերգեյ Փարաջանով. այս անունը կարող է զանգակի ղողանջ լինել շատերիս համար: Կինոռեժիսոր, որը ստեղծել է «Նռան գույնը»: Նա տարիներ շարունակ տառապել է Խորհրդային Միության բանտերում, որովհետեւ վճռականություն է ունեցել ասելու այն, ինչ մտածել է: Ոչ ոք չէր կարող կաղապարել նրա ստեղծարար միտքը, ձեռքն ընկած ամեն մի նյութից արվեստի նմուշ էր ստեղծում: Փարաջանովի հրաշալի թանգարանում ինձ թույլատրեցին փորձել նրա պատրաստած գլխարկներից մեկը:

Փառատոնի մեդալը պատրաստվում է փարաջանովյան արվեստի նմուշներից մեկի նմանությամբ: Բանտում Փարաջանովն այն ստեղծել է եղունգներով՝ կաթի շշի փականից: Փառատոնի տնօրեն Հարություն Խաչատրյանն առաջին կինոփառատոնի մեկնարկով վերակենդանացրեց կինոն Հայաստանում: Կարո՞ղ եք պատկերացնել: Ողջ երկիրը տարիներ շարունակ կինո չի ունեցել: Նա պայքարել է փառատոնի համար եւ, հիրավի, մեր աչքերում հերոս է:

Հարություն Խաչատրյանը Վիմին խնդրեց Միքելանջելո Անտոնիոնիի կնոջը՝ Էնրիկային հանձնել ամուսնուն տրված «Կինոյում մեծագույն վաստակի համար» մրցանակը: Հուզիչ պահ էր:

Մենք մտադիր ենք մի քանի օրով գնալ գյուղական վայրեր: Այնպես որ, այդ մասին շուտով կլսեք:

Դոնաթա

Սիրելիներս,

Ձերմ եւ արեւոտ Երեւանում գտնվելու երկրորդ օրը գնացինք Մատենադարան, ուր ցուցադրվում են հնագույն ձեռագիր մատյանները: Մեծ գանձերի հավաքատեղի, որտեղ ծանոթացանք Հայաստանի տխուր, բայց միաժամանակ հերոսական պատմությանը: Այսօր պահպանվել է Հայաստանի պատմական տարածքի ընդամենը 10 տոկոսը՝ անհաշիվ պատերազմների եւ նախանձի պատճառով: Թանգարանի աշխատակիցները մեզ հետ գերմաներեն էին խոսում: Այս երկրում գերմաներեն շատերն են լավ խոսում: Սովետական 40 տարվա համակարգը Հայաստանը կապել էր Գերմանիայի արեւելյան հատվածին:

Հետո Վիմը վարպետության դասեր տվեց, պատմեց իր անցած ուղու, նկարիչ դառնալու ցանկության, փարիզյան ժամանակների, ամեն օր կինոթատրոն այցելելու, Մյունիխի կինոդպրոց տեղափոխվելու ու նաեւ այն մասին, թե ինչպես սիրելի սախոֆոնը փոխեց 16մմ-անոց կինոխցիկի հետ: Նրա խիստ անձնական պատմությունները ոգեշնչեցին երիտասարդ կինոռեժիսորներին ու դերասաններին, որ եկել էին Ուկրաինայից, Վրաստանից եւ Հայաստանից: Երիտասարդների դիտարկումները գործնական էին, լի իդեալիզմով եւ հումորով:

Աջից ձախ՝ Դոնաթան, Վիմը եւ Էնրիկա Անտոնիոնին 5-րդ «Ոսկե ծիրանի» փակման հանդիսությանը

Թանկագիններս,

Ուղեւորությունը դեպի գյուղական վայրեր սկսեցինք մեր էքսկուրսավար Նաիրայի ուղեկցությամբ: Տեսարաններն ուղղակի հոյակապ էին: Երկիրը լի է բազմադարյան վանքերով եւ եկեղեցիներով: Առաջին եկեղեցին, ուր այցելեցինք, կառուցվել էր 4-րդ դարում: Անչափ տպավորիչ էր, ու պատճառը միայն եկեղեցու հին լինելը չէր: Կառույցի մի մասն ուղղակի ժայռերի մեջ է եւ հրաշալի ակուստիկա ունի: Մենք իսկույն սկսեցինք երգել: Հրաշալի էր: Տեսանք այն քարանձավները, որոնցում վանականները կարող են թաքնվել հետապնդումների ժամանակ:

Ճանապարհին մեզ առաջարկեցին համտեսել ազգային ուտեստներ: Մի անգամ կանգ առանք ռեստորաններից մեկում, որը սովետական տարիների գրավչություն ուներ: Մատուցվեց թարմ կանաչի, լավաշ, մածուն եւ տավարի խորոված միս:

Օ՜, ես բավականին սեւ ու սպիտակ լուսանկարներ եմ արել: Գյուղերում բազմաթիվ գեղեցիկ մարդկանց հանդիպեցինք: Մենք եղանք այնպիսի վայրերում, որոնք երկրաշարժից հետո չէին վերականգնվել: Մարդիկ դեռեւս ստիպված են ապրել թիթեղե տնակներում: Բայց մենք միայն գանգատներ չլսեցինք: Թվում էր, մարդիկ հրաժարվում էին կյանքին բացասական կողմից նայել: Նրանք շնորհակալ էին այն ամենի համար, ինչ ունեին:

Վաղը կպատմեմ ավելի շատ:

Սիրով՝ ***Վիմ*** *եւ* ***Դոնաթա***

Սիրելիներս,

Մեկ այլ զարմանալի օր սկսվեց հրաշալի եղանակով: Կարողացանք տեսնել Արարատ լեռը: Ապշեցուցիչ էր: Արարատն այնքան կարեւոր է ողջ հայության համար, բայց Թուրքիայի տարածքում է: Դաշտի վերջում հայ-թուրքական սահմանն է: Չնայած դու այն չես տեսնում, բայց ոչ ոք չի կարող անցնել այդ ամուր գիծը: Մեր շուրջը նայելով այնքան տառապանք ենք զգում:

Գերեզմաններ.... Օ՜, մենք շատ տեսանք ճանապարհին: Վիմը լուսանկարների մեծ շարք պատրաստեց: Գերեզմանատներին դիմանկարներ կան եւ դու կարող ես հասկանալ, թե ինչո՞ւ եւ ինչպե՞ս են մարդիկ մահացել: Քարի մի կողմում երիտասարդ տղայի պատկերն է, մյուսում՝ չափազանց երիտասարդ զինվորի: Վշտալի է: Այդ պատկերները խոսքերի կարիք չունեն:

Այն բազմաթիվ վանքերը, որ տեսանք ճանապարհին, մեկ ընդհանրություն ունեին՝ խաղաղություն, որ բառացիորեն դուրս է այս աշխարհից: Մեկ այլ վանքում քահանան ամառային դպրոց էր հիմնել եւ շրջակա բնակավայրերի երեխաներին համակարգչային ծրագրեր էր սովորեցնում:

Շատ վայրերում ցանկանում էինք ավելի երկար մնալ, քանի մեր ժամանակն էր ներում: Եվ միշտ ասում էինք՝ «Հաջորդ անգամ»: Մեր էքսկուրսավարը՝ Նաիրան, թույլ չէր տալիս մոռանալ ժամանակի մասին: Դեպի Երեւան ճանապարհն անցնում էր լեռնամետալուրգիական գործարան ունեցող քաղաքի միջով: Վիմը հիշեց իր երիտասարդությունը Օբերհաուզենում, որովհետեւ զգաց այն հոտը, որն իրար է միացնում այդպիսի գործարաններ ունեցող աշխարհի բոլոր քաղաքները: Հետո անցանք բազմաթիվ փոքր բնակավայրերի միջով: Օ՜, այնքան տեսնելու բան կա այս երկրում: Ես միայն կարող էի ասել. «Եկեք փակենք մեր աչքերն ու արագորեն անցնենք», այլապես ուզում էի ուղղակի դուրս թռչել: Ինչ հարուստ երկիր է: Եվ ընդամենը Բավարիայի չափ տարածք ունի:

Երեւան տանող ճանապարհի ուղիղ կողքին չափից դուրս ճոխ պալաս տեսանք: Ասում են, այն պատկանում է մի մարդու, որը շինանյութերի առեւտրով է զբաղվում:

Երեւանում Վիմը եւս մեկ վարպետության դաս անցկացրեց: Այն նույնքան ոգեւորիչ էր, որքան առաջինը:

Մենք չենք ուզում հեռանալ Հայաստանից: Կյանքն այստեղ հրաշալի է: Մեզ հետ վերաբերվում են ինչպես արքայական ընտանիքի: Մենք կվերադառնանք Ատլանտ կամոք: Ամենահուզիչ պահը փառատոնի եզրափակիչ արարողությունն էր: Վիմը մրցանակ ստացավ աշխարհի բազմաթիվ ռեժիսորներին իր ֆիլմերով ներշնչելու համար: Էգոյանը մրցանակը հանձնեց սրտահույզ ելույթով: Օ՜, ինչ վեհանձն խոյլ էր, ինչպիսի բարյացակամություն եւ հարգանք: Մենք հուզված էինք մինչեւ սրտի խորքը: Եվ ասացինք. «Շնորհակալություն, Հայաստան: Շնորհակալություն Ատո՛մ, Հարություն Խաչատրյան, շնորհակալություն բոլոր նրանց, ովքեր հնարավոր դարձրին այս ուղեւորությունը: Մենք կվերադառնանք Հայաստան, մի երկիր, որը ներքորեն տեղ գտավ մեր հոգիներում»:

Հաջորդ անգամ մեր մասին կլսեք Սեուլից եւ Տոկիոյից:

Համբույրներ բոլորիդ Տոկիոյից:

Սիրով՝ ***Վիմ*** *եւ* ***Դոնաթա***

Փարաջանովի թանգարանում Վիմը լուսանկարում է տիկնոջը

Թարգմ.
Արեգիկ Բաղալյանի

ՀՈԾԱՎԱԿՍԱՐ

Օլիվեր Սթոունի «W» տրագիկոմեդիան

Ոչ զուտ ներբողական, ոչ էլ ամբողջովին բացասական կամ ենթադատական է որակել կինոգետ Մանուել Դարգիսը ճանաչված ռեժիսոր Օլիվեր Սթոունի նոր գլուխգործոցը՝ «W» ֆիլմը, որն արժանացել է «Թայմս» հանդեսի կինոհենադատների հատուկ ուշադրությանը: Ֆիլմը Մ.Նահանգների ներկա վարչակազմի ղեկավար Ջորջ W. Բուշի պատմանավառման վերջին օրերի, նրա «վերելի եւ անկման, անկման եւ դարձյալ անկման» մասին է (ըստ Դարգիսի բնորոշման): Քաղաքական ֆարսերի դերասան Ջոշ Բրոլինը մարմնավորում է աղագա «թագավորի» դերը, իսկ Ռիչարդ Դրեյֆուսը սանձնել է Դիկ Չեյնիի դերը:

Բոտլեսկյան ոճով նկարահանված ֆիլմը ռեժիսորի վառ երեւակայության արդյունքն է, համեմված հուզական երաժշտությամբ, դանդաղեցված կադրերով եւ աղբեցուցիչ սիմվոլիզմով: Ճիշտ է, ֆիլմը ոչ մի նոր բան չի ասում Բուշի, նրա հաղթանակների կամ պարտությունների մասին, բայց թարմացնում է մարդկանց հիշողությունները Սդիսակ տանը նրա անցկացրած երկար եւ տարօրինակ կյանքից:

Ֆիլմի առաջին կադրերում բեյսբոլի դասարկ մարզադաշտում հայտնված, մեջքին 43 համարը կրող միջին տարիքի Բուշն է: Կադրից դուրս հաղորդավարը ներկայացնում է նրան, ասելով. «Մ.Նահանգների 43-րդ նախագահը»: Բուշը նայում է շուրջը, աղաղդյուն որոնելով «հանդիսատեսներին», որոնք բնավ «ներկա չեն»: Ազդեցիկ տեսարան, որը թեպետ Սթոունը հաճախ է օգտագործում ֆիլմում, սակայն դրանով, ըստ ամենայնի, ցանկանում է ընդգծել այն գլխավոր միտքը, որ «Բուշը միայնակ է իր երազների աշխարհում»: Բուշն անընդհատ փոխում է «կերպարը»՝ «փարթիներ» հաճախող ուսանող, տանը առանձնակի խելամտությամբ չփայլող որդի, շուկայում կանգնած անտարբեր նավթարդյունաբերող, «անընդմեջ սիրախաղերով» զբաղվող եւ սպորտասեր, իսկ հետագայում՝ ուշադիր ամուսին, վերածնված քրիստոնյա եւ նորափթիթ քաղաքական գործիչ: Այս վերջին դերը, ըստ Սթոունի, Բուշին բոլորովին չի սազում, չնայած կինոբեմադրիչը ֆիլմում բավականին հանդուրժող է Բուշի նկատմամբ, քան ֆիլմից դուրս: CNN -ի լրագրող Լարի Քինգին տված հարցազրույցներից մեկում Սթոունը Բուշին ոչ ավելի ոչ պակաս «անբան» է անվանել:

Առանց մեծ ջանքեր գործադրելու Բրոլինը կարողանում է Բուշի կյանքի վերնշյալ շրջանները ներկայացնել, բայց ինչպես Սդիսակ տան մյուս անդամների, այնպես էլ Բուշի կերպարը չափազանց ընդգրկուն է ամբողջապես պատկերելու համար:

Ընդհանրապես դժվար է պատմաքաղաքական կերպարներ մարմնավորելը: Հիշենք նույն ռեժիսորի «JFK»-ը (1991) եւ «Նիքսոնը» (1995) ֆիլմերը: «W»-ն ոչ մեկն է, ոչ մյուսը, երկուսն էլ ավելի խորը եւ համարձակ «ճանապարհորդություններ» են դեպի նախագահի հոգեբանություն: Ըստ Մանուել Դարգիսի, Սթոունն այս անգամ շապել է: Նա չունի ժամանակի գեղագիտական անհրաժեշտ հեռավորությունը՝ ճիշտ կողմնորոշվելու համար եւ «կարծես ուզում է իրեն ավելի հավասարակշռված պահել, քան նախորդ անգամներին»: Բայց պահպանում է իրեն բնորոշ պատմողական ոճի հաճելի «հոսունությունն ու սահունությունը»:

Ֆիլմի տեւողությունը 129 րոպե է, գործողությունները ծավալվում են 1966 - 2004-ը, հավանական է, որ Սթոունը հետագայում նկարահանի ֆիլմի երկրորդ մասը:

Սթոունը առավելապես շեշտը դնում է Բուշի երիտասարդ տարիների վրա, այսինքն՝ մինչեւ Մ. Նահանգների նախագահ դառնալը, հետեւաբար կարելի է ասել, որ ֆիլմն ավելի կատակերգական է, քան ողբերգական: Միայն իրաքյան պատերազմում վիրավորված ու զոհված զինվորների գրաֆիկական տեսարաններն են հանդիսատեսին սիրտդ զսպել ծիծաղն ու լրջանալ: Սթոունը կարծես մեզ ներկայացնում է «սխալների կատակերգություն», որը, պետք է խոստովանել, թանկ նստեց մեզ վրա:

Ֆիլմում նկարահանվել են նաեւ Ջեյմս Կրոմվելը՝ Բուշի հոր դերում, Էլեն Բուրստինը՝ Բարբարա Բուշի դերում, Էլիզաբեթ Բանկսը՝ Լաուրա Բուշի դերում, Թենդի Նյուտոնը՝ Կոնդոլիզա Ռայսի դերում եւ Սթոք Գլենը՝ Ռոնալդ Ռամսֆելդի դերում:

Իսկ «W» խորագիրը Ուոքր (Walker) անվան սկզբնատառն է, որով հաղորդավարները կրսեր Բուշին (George W. Bush) տարբերում են ավագից, որի ամբողջական անունն է Ջորջ Հերբերտ Ուոքր Բուշ:

Ըստ «Նյու-Յորք թայմզի»
պատրաստեց՝ ՀԱԿՈԲ ՕՈՒԼԻԿՅԱՆԸ

Ալ Պաչինոն արժանացել է Հռոմի կինոռիաոատոնի մրցանակին

Ամերիկացի անվանի ռեժիսոր եւ դերասան Ալ Պաչինոյին այդ մրցանակը շնորհվել է կինոարվեստում ունեցած մեծ վաստակի համար: «Շատ կցանկանայի այստեղ բերել իմ նոր ֆիլմը: Հուսով եմ, եկող տարի ինձ կհաջողվի դա անել», ասել է Ալ Պաչինոն: Փառատոնում տեղի է ունեցել համաշխարհային պրեմիերա՝ առաջին անգամ ցուցադրվել է ՄԱԿ-ի հովանավորությամբ նկարահանված ութ մասից բաղկացած կինոալմանախը՝ աղքատության խնդրի վերաբերյալ: Ալմանախի ստեղծմանը մասնակցել է նաեւ այս տարվա «Ոսկե ծիրանի» պատվավոր հյուրերից մեկը՝ հանրահայտ կինոբեմադրիչ Վիմ Վենդերսը:

Հռոմի փառատոնում ցուցադրվել են հիմնականում եվրոպական ֆիլմեր, այս տարի ընդգրկվել է մեկ ամերիկյան ֆիլմ՝ «Հպարտություն եւ փառք»: Փառատոնի մրցանակակիրները հայտնի կդառնան այսօր:

Ռուսական կինոյի օր Հռոմում



Հռոմի կինոփառատոնում երեկ անցկացվել է «Ռուսական կինոյի օր» ծրագիրը, որում ընդգրկվել են ռուս կինոբեմադրիչներ Անդրեյ Կոնչալովսկու, Կարեն Շահնազարովի, Նիկիտա Միխալկովի ֆիլմերը: Այդ առիթով Հռոմ է ժամանել նաեւ Անդրեյ Կոնչալովսկին՝ իտալացիներին ներկայացնելու իր «Մոտիկ շրջապատ» ֆիլմը անհատի պատասխանատվության եւ հասարակ մարդկանց ճակատագրերի մասին:

Ռ. Պ.

Ի՞նչ կա-չկա Հայաստանի ազգային կինոկենտրոնում

- «Մոսկվա» կինոթատրոնում այսօր տեղի կունենա Ալբերտ Մկրտչյանի «Տխուր փողոցի լուսաբացը» ֆիլմի պրեմիերան, գլխավոր դերերում՝ Գուժ Մանուկյան, Անահիտ Հարությունյան:
- Մինչեւ տարեվերջ կավարտվեն Հովհաննես Գալստյանի «Խճճված զուգահեռները» («Պարալելս ֆիլմ պրոդաքշնը» Հայաստանի, Շվեյցարիայի, Նորվեգիայի, Ֆրանսիայի հետ համատեղ), Դավիթ Սաֆարյանի «Նա եւ նեն» (Հոլանդիայի եւ Գերմանիայի հետ համատեղ), Միխայել Դովլաթյանի «Սողանք» ֆիլմերի նկարահանման եւ մոնտաժման աշխատանքները:
- Արտադրության մեջ են Վահե Գետոյանի «Օրորոցային», Սուրեն Բաբայանի «Մի նայիր հայելուն» (Մ.Նահանգների հետ համագործակցությամբ), Վիգեն Չալդրանյանի «Մաեստրո» և «Սպիտակ ձիու ամառը», Արամ Շահբազյանի «Ցնչիկը», Լևոն Մինասյանի «Երկրորդ ճանապարհորդություն» (Ֆրանսիայի հետ համագործակցությամբ) ֆիլմերը:
- Արդեն ավարտվել են Նարինե Մուրադյանի «Սումի տրոլը», Վրեժ Քասունու «Ավրորան», Յուրա Սուրադյանի «Բիթլիսը» (նկարահանված Վիլյամ Սարոյանի համանուն պատմվածքի հիման վրա) մուլտիպլիկացիոն ֆիլմերը: Շուտով կվարտվի եւս 3 մուլտիպլիկացիոն կինոնկարների արտադրություն՝ Արման Մանարյանի «Սասունցի Դավիթ» մուլտֆիլմի 8-րդ մասը, Գայանե Մարտիրոսյանի «Վիշապագորգը», Ռոբերտ Սահակյանցի «Ճանապարհ դեպի տուն» մուլտֆիլմի 3-րդ մասը:
- Կինոկենտրոնն արդեն ավարտել է «Գժուկ» մանկական-երգիծական կինոհանդեսի 6 մասերը, առաջիկայում կնկարահանվի եւս 6 սյուժե:

Կինոկենտրոնի
մամլո ծառայություն

Լեւ Ատամանովի «Տունն ու կատուն» մուլտֆիլմն ու նրա հետնորդները Սերգեյ Գալստյանի գրքում



Հայաստանի ազգային կինոկենտրոնը լույս է ընծայել գրող, կինոգետ Սերգեյ Գալստյանի «Կախարդական գորգ» գիրքը, որում ամփոփված է հայկական մուլտիպլիկացիոն կինոյի 70-ամյա ուղին՝ սկիզբ առած Հովհաննես Թումանյանի «Տունն ու կատու» ստեղծագործության հիման վրա 1938թ. մոսկվացի հայ ռեժիսոր Լեւ Ատամանովի (Լեւոն Ատամանյան) ստեղծած առաջին մուլտֆիլմից մինչեւ մեր օրերում անիմացիոն ֆիլմի վերածվող «Սասունցի Դավիթը» էպոսը՝ ռեժիսոր Արման Մանարյանի բեմադրությամբ:

Ինչպես նշվում է գրքում, «Տունն ու կատու» մուլտֆիլմի ստեղծման աշխատանքներում ներգրավվել են երիտասարդ 25 նկարիչներ, որոնցից շատերը հետագայում դարձան հմուտ մուլտիպլիկատորներ: Ատամանովը նրանց հետ ստեղծեց եւ 2 աշխատանք՝ «Տերտերն ու այծը» 1939թ. եւ «Կախարդական գորգը» 1949թ, որից հետո անսպասելիորեն մեկնեց Մոսկվա եւ փաստորեն մուլտֆիլմերի արտադրությունը Հայաստանում կանգ առավ: Դրանից հետո 2 տասնամյակ պահանջվեց անիմացիոն կինոն վերածնելու համար եւ հաջողվեց միայն կինեմատոգրաֆիստների միության նախագահ Լաերտ Վաղարշյանի եւ նկարիչ բեմադրող Վալենտին Պոդոմոգովի ջանքերի շնորհիվ: 1970-80-ականներին հայկական մուլտիպլիկացիոն կինոն հասավ զարգացման բարձր մակարդակի, ճանաչվեց ու գնահատվեց միջազգային ասպարեզում, արժանացավ հեղինակավոր մրցանակների: 90-ականներին հայտնի պատճառներով որոշակի անկում արձանագրեց, սակայն վերջին մի քանի տարիներին ստեղծվում են անիմացիոն ֆիլմեր, որոնք աչքի են ընկնում գեղարվեստական ինքնատիպ լուծումներով: Գրքի առաջաբանում կինոկենտրոնի տնօրեն Գետոյանը նշում է, որ «Սերգեյ Գալստյանի հրատարակած գրքերի մեծ մասը նվիրված են հայկական կինոյին, նրա երախտավորներին: Մինչ այս նա երկու անգամ անդրադարձել է հայկական անիմացիոն կինոյին՝ «Հրաշքներ, որ կատարվում են ամեն օր» (1979), եւ «Երբ ընչավորվում է հեքիաթը» (2003) գրքերով: Գալստյանի այս աշխատանքն առավել ամբողջական է թե՛ պատմության ուսումնասիրությամբ, թե՛ ընդգրկումով»:

Ռ. Պ.

Դերսիմի ցեղասպանության 70-րդ տարելիցին նվիրված կոնֆերանս Եվրոխորհրդարանում

Ցեղասպանության հեղինակը նույն պետությունն է՝ Թուրքիան

Նոյեմբերի 13-ին Եվրոխորհրդարանում կկազմակերպվի «Դերսիմ-38. Ցեղասպանության 70-րդ տարելիցը» թեմայով կոնֆերանս: Մինչ կոնֆերանսին անդրադառնալը նշենք, որ դերսիմցիները ծագումով զազա են, իսկ դավանանքով՝ ալավի: Նրանց առաջին ապստամբությունը Թուրքիայում բռնկվել էր 1924-ի մարտին երկրում հանրապետական կարգերի հռչակումից 5 ամիս հետո: Դա առաջնորդի անունով կոչվում է Շեյխ Սաիդի ապստամբություն: Դրան էր հետևել 1936-38 թթ. համաժողովրդական խռովությունը, որ պատմագրության մեջ հայտնի է որպես «Դերսիմի ապստամբություն»:

Դերսիմցիների այս երկու խռովությունները Թուրքիայում դաժանորեն ճնշվել են, եւ բոլոր առաջնորդները կախաղան էին հանվել: Այդ ընթացքում Դերսիմի վիլայեթը վերանվանվել էր Թունջելի: Հետեւաբար «Դերսիմ-38. Ցեղասպանության 70-րդ տարելիցը» թեմայով Եվրոխորհրդարանի ծածկի տակ կազմակերպվող կոնֆերանսը նվիրված է նաեւ դերսիմցիների երկրորդ ապստամբության 70-ամյակին, որի ընթացքում պաշտոնական տվյալներով սպանվել է 12 հազար, իսկ ոչ պաշտոնականով՝ ավելի քան 70 հազար դերսիմցի:

Մինչ այդ Եվրոխորհրդարանում կազմակերպվել էին հայերի, ասորիների, պոնտացի հույների ցեղասպանություններին նվիրված մի շարք կոնֆերանսներ: Առաջիկա միջոցառումը Դերսիմի ցեղասպանության թեմայով կլինի առաջին կոնֆերանսը, որի առնչությամբ հրատարակված տեղեկագրում մասնավորապես նշվում է, որ ափարհում բազմաթիվ պետություններ ներողություն են խնդրել իրենց իրականացրած ցեղասպանության կամ այլ հանցագործությունների համար, հակառակ դրան Թուրքիան շարունակում է համառել կատարած հանցանքն ընդունելու հարցում, Թուրքիայից պահանջվում է հրաժարվել ժխտողականության քաղաքականությունից: Տեղեկագիրը հիշեցնում է, որ Ավստրիան ընդունել է նացիստների հետ համագործակցության փաստը, Ավստրալիան՝ տեղաբնիկներից, Կանադան Քվեբեկի բնակիչներից ներողություն է խնդրել, մինչդեռ Թուրքիայում առ այսօր քրդերի դեմ ճնշումներ են կիրառվում, ոմբակոծվում են քրդաբնակ շրջանները, ամայացվում են քրդական գյուղերն ու սպանություններ են կատարվում բնակչության շրջանում:

Կոնֆերանսին զեկուցողի կարգավիճակով մասնակցելու են Թուրքիայի ազգային մեծ ժողովում «Ժողովրդավարական հասարակարգ» կուսակցության Թունջելիի եւ Դիարբեքիրի պատգամավորներ Շերաֆեթդին Հալիսն ու Այսել Թուղլաքը, Թունջելիի քաղաքապետ Սոնգյուլ Էրոլ Աբդալը, Դերսիմի վերակառուցման միության նախագահ Հայդար Ըբդը, «Թարաֆ» թերթի խմբագիր Այշե Յյուրը, Բրեմենի համալսարանի պրոֆ. Ռոնալդ Մյունխը, ԵՄ-Թուրքիա քաղաքացիության հանձնաժողովի անդամ Հանս Բրանշեյդը, ինչպես նաեւ Եվրոպահայերի արդարության եւ ժողովրդավարության ֆեդերացիայի նախագահ Հիլդա Չոբոյանը:

Հոկտեմբերի 29-ի համարում առաջիկա կոնֆերանսին անդրադառնալիս «Զաման» թերթը թուրք ընթերցողի ուշադրությունը հրավիրում է կոնֆերանսին մեր հայրենակից Չոբոյանի մասնակցության վրա, ընդգծելով միաժամանակ, որ նա հարում է Հայ հեղափոխական դաշնակցությանը: Նույն օրվա համարում «Դերսիմ-38. Ցեղասպանության 70-րդ տարելիցը» թեմայով կոնֆերանսը հեգնանքի առարկա է դարձնում «Վաքան» թերթը, որին, թուրք իսլամականների հավաստմամբ, «Սորոսի» հիմնադրամն է ֆինանսավորում:

«Վաքանը» գրում է. «Դրսից ողողվող հայկական լոբբիների առաջադրած «ցեղասպանության» նորաձեւությունից անմասն չմնացին նաեւ դերսիմցիները: Դա հասկանալի էր, սակայն չէր հասկացվում, թե քրդերն ինչու են կոնֆերանսը սահմանափակել Դերսիմով միայն, որովհետեւ հայերը հնարավորինս ընդարձակել էին ցեղասպանության իրագործման տարածքները: Հետո հասկացանք, որ Թուրքիայում շուրջ 90 հազար հայ է մնացել, եւ մարդիկ համեմատելով այդ թիվը Հոլոքոստից հետո Գերմանիայում մնացած հրեաների թվի հետ, կարող են հավատալ հայերի բնաջնջման վարկածին երկրի ողջ տարածքում: Մինչդեռ քրդերը նախքան «ցեղասպանության» նորաձեւությանը հետեւելն ի լուր ափարհին հայտարարել են, որ Թուրքիայում քրդերի թիվը 15-20 մլն է: Քանի որ բազմամիլիոնանոց քուրդ բնակչության առկայությունը հակասում է «ցեղասպանության» ենթարկվելու վարկածին, ուստի քրդերը նախընտրեցին «ցեղասպանությունը» սահմանափակել Դերսիմով միայն:

«Վաքանը» կոնֆերանսի կազմակերպումը վերագրում է Թուրքիայի մասնատման Արեւմուտքի ծրագրերին եւ նշում. «Իբր Թուրքիան տարվա հյուրն էր Ֆրանկֆուրտի գրքի տոնավաճառում, որտեղ տաղավարի պատին կախում են մասնատված Թուրքիայի քարտեզը: Մինչ մշակույթի նախարար Էրթուղրուլ Գյունայը թյուրիմացաբար հարցազրույց է տալիս քուրդ անջատողականների Roj TV հեռուստակայանին, մասնատված Թուրքիայի մեկ այլ քարտեզ հայտնվում է ԱՄՆ Կոնգրեսում: Ամեն ինչ գին ունի եւ՝ վճարման ժամկետ: Պատրաստ է նաեւ Թուրքիային վճարելու հարկադրանքի տակ դնող սպառնալիքը, որի ազդանշաններն արձակում են Բրյուսելից: Դերսիմի ցեղասպանությանը նվիրված կոնֆերանս է կազմակերպում Եվրոխորհրդարանը»:

ՀԱՍՈՒՆ ՉԱՔԱԲՅԱՆ

ՄԱԿ-ը դատապարտեց Կոնգոյի ապստամբներին

ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը արտահերթ նիստում դատապարտել է Կոնգոյի Գոմա քաղաքը շրջապատած ապստամբների գործողությունները: Ֆրանսպրեսը հաղորդում է, որ ԱԽ բոլոր 15 անդամները միաձայն ընդունած հայտարարությամբ գեներալ Լորան Նկունդայի կողմնակիցներին կոչ են արել դադարեցնել բռնությունները:

Խորհուրդը նաեւ մտահոգություն է արտահայտել Կոնգոյի եւ Ռուանդայի սահմանում սկսված փոխհրաձգության կապակցությամբ:

Կառավարական զորքերը փախել էին Գոմայից, երբ ապստամբները չորեքշաբթի օրը շրջապատեցին քաղաքը եւ հրադադար հայտարարեցին բնակչությանը հանգստացնելու նպատակով: Գեներալ Նկունդան խոստացավ, որ իր ջոկատները չեն խոչընդոտի ՄԱԿ-ի խաղաղարար ուժերին:

Կառավարական ուժերի եւ ապստամբների տասնամյա դիմակայությունը խորացավ անցյալ շաբաթվերջին: Հնարավոր քաղաքացիական պատերազմից վախենալով՝ 45 հազար մարդ փախավ Կոնգոյի հյուսիսում ՄԱԿ-ի ստեղծած գաղթականներից:

Դերեսը ներողություն խնդրեց Մուբարաքից

Իսրայելի նախագահ Շիմոն Պերեսը հրեա պատգամավորներից մեկի խոսքերի պատճառով ստիպված է եղել պաշտոնապես ներողություն խնդրել Եգիպտոսի նախագահ Հոսնի Մուբարաքից: «Եդիոթ Ահրոնոթ» թերթը տեղեկացնում է, որ այս աղմկալի պատմության պատճառը պատգամավոր Ավիգդոր Լիբերմանի ելույթն է, որը խորհրդարանում ասել էր. «Թող Մուբարաքը կորչի գրողի ծոցը»:

Եգիպտոսի նախագահի հաստատեցին այդ անզգույշ հայտարարությունն արվել էր նրա Իսրայել չմեկնելու կապակցությամբ: «Եթե Մուբարաքը չի ուզում գալ Իսրայել, ապա թող կորչի գրողի ծոցը», բառացիորեն ասել էր հրեա պատգամավորը: Նա դժգոհ է, որ Մուբարաքը, ի տարբերություն Եգիպտոսի նախկին նախագահ Անվար Սադաթի, ձեռնպահ է մնում Իսրայել ուղեւորվելուց:

Պերեսն ասել է, որ ինքը շատ է հարգում իր եգիպտացի պաշտոնակցին եւ վստահ է, որ «մեկ անզգույշ խոսքը չի կարող քայքայել երկու երկրների փոխհարաբերությունները»:

Սիրիայում հակաամերիկյան ցույցեր փակ դեսպանատան մոտ

Հոկտեմբերի 30-ին Դամասկոսում ԱՄՆ դեսպանատունը ընդհատել էր իր ափսանքը՝ սպասվող հակաամերիկյան ցույցերի կապակցությամբ: Դեսպանատան ներկայացուցիչները CNN-ի թղթակցին ասել են, որ ափսանքն ընդհատվել է անվտանգության նկատառումներով:

Դեսպանատան մոտ երեկ անցկացված բազմամարդ հանրահավաքի մասնակիցները բողոք են արտահայտել ամերիկացի զինվորականների գործողությունների դեմ, որոնք հոկտեմբերի 26-ին Իրաքից 4 ուղղաթիռներով Սիրիայի տարածք ներխուժելով՝ սպանել էին 8 (այլ տեղեկությունների համաձայն՝ 9) խաղաղ բնակիչների:

Բողոքի առաջին ցույցերը ԱՄՆ դեսպանատան մոտ սկսվել էին հոկտեմբերի 29-ին:

«Ազգը» գրել է հոկտեմբերի 26-ի դեպքերի, ինչպես նաեւ ՄԱԿ-ին Սիրիայի հասցեագրած պաշտոնական բողոքի մասին: Ամերիկացիները մինչեւ օրս Սիրիայից ներողություն չեն խնդրել եւ փորձում են իրենց արարքն արդարացնել իբր «Ալ Ղաիդայի» ահաբեկիչներից մեկի դեմ ուղղված «հատուկ գործողությամբ»:

Չինաստանի գծով Ռուսաստանը 2-րդ տեղում է

Զենքի արտահանման գծով Ռուսաստանը ափսարհում կայուն կերպով զբաղեցնում է երկրորդ տեղը, զիջելով միայն ԱՄՆ-ին: Այդ մասին հաղորդում է Ռոյթեր գործակալությունը, վկայակոչելով Կոնգրեսի պատրաստած զեկուցագիրը: Փաստաթղթի հեղինակները նշում են, որ 2007 թվականին Ռուսաստանը 10,4 մլրդ դոլարի զենք է վաճառել: Դա կազմում է ափսարհում վաճառված զենքի ընդհանուր ծավալի 17,4 տոկոսը:

Մեկ տարի առաջ կազմված համանուն զեկուցագրում նշվում էր, որ ռուսական զենքի մատակարարումների ընդհանուր գումարը 8,1 մլրդ դոլար է: Այսինքն՝ գումարային առումով աճն ակնհայտ է, բայց երկրորդ տեղը պահպանվում է:

Այս տարվա զեկուցագրի համաձայն, ռուսական զենքի գլխավոր գնորդներն են Հնդկաստանը եւ Չինաստանը: Սակայն վերջերս Մոսկվան մեծ ջանքեր է գործադրում Հյուսիսային Աֆրիկայում, Մերձավոր Արեւելքում եւ Հարավարեւելյան Ասիայում գնորդներ գտնելու նպատակով: Փորձեր են արվում դուրս գալու Լատինական Ամերիկայի շուկա: Այդ տարածաշրջանում արդեն հայտնվել է ռուսական զենքի գնորդ՝ Վենեսուելան:

Փաստաթղթում նշվում է, որ ռուսական զինատեսակներն ընդհանուր առմամբ ցածր գների շնորհիվ կայուն պահանջարկ ունեն նոր զարգացող երկրներում:

Զենքի մատակարարումների գծով ափսարհում առաջատարն է ԱՄՆ-ը, որ 2007 թ. զինավաճառքի 24,8 մլրդ դոլարի պայմանագրեր է կնքել: Նախորդ թվականին վաճառված ամերիկյան ամբողջ զենքը գնահատվել է 16,7 մլրդ դոլար: Ամերիկյան զենքը կազմում է սպառազինությունների օրինական ամբողջ շուկայի 41,5 տոկոսը:

Չինավաճառքի գծով 2007 թվականին 3-րդ տեղը զբաղեցրել է Մեծ Բրիտանիան՝ 9,8 մլրդ դոլար: 2006-ին բրիտանացիները վաճառել էին 4,1 միլիարդի զենք:

2007 թվականին ափսարհում զենքի գլխավոր գնորդներն էին Սաուդյան Արաբիան, Հնդկաստանը եւ Պակիստանը: Սաուդցիները զենքի ներմուծման վրա ծախսել են 10,6 մլրդ դոլար, որից 9 միլիարդը՝ եվրոպական 72 կործանիչներ գնելու համար: Հնդկաստանը 2007-ին ձեռք է բերել 5 մլրդ, Պակիստանը՝ 4,2 մլրդ դոլարի սպառազինություն:

Օբաման խոստանում է ստեղծել երկկուսակցական վարչակազմ

Նախագահության դեմոկրատ թեկնածու Բարաք Օբաման խոստացել է իր հաղթանակի դեպքում կազմավորել երկկուսակցական վարչակազմ, հաղորդում է Ֆրանսպրեսը գործակալությունը: Երեկ իր հեռուստատեսային հարցազրույցում Օբաման ասել է, որ ինքն արդեն թեկնածուներ է գտել կառավարության գլխավոր պաշտոնների համար, սակայն անուններ չի տվել:

Պաշտպանության նախարար Ռոբերտ Գեյթսի հետագա պաշտոնավարմանը վերաբերող հարցի կապակցությամբ Օբաման հայտարարել է, որ ինքը ազգային պաշտպանության թիմ կձեւավորի «ոչ կուսակցական» սկզբունքով:

Ավելի վաղ Օբամայի վարչակազմում տեղ էին խոստացել հայտնի հանրապետականներից մեկին՝ նախկին պետքարտուղար Քոլին Փաուելին, որը վերջերս հանդես եկավ դեմոկրատների թեկնածու Օբամայի պաշտպանությամբ:



Նախագահության հանրապետական թեկնածու Ջոն Մակքեյնը իր հերթին եւս օրեր առաջ խոստացել էր հաղթելու դեպքում վարչակազմում տեղեր հատկացնել մրցակից Դեմոկրատական կուսակցության անդամներին:

Ավելին, քան այսքանը

Աշխարհն ու մարդու ետը. հավերժական հանգույցներ. անձնական կողմնորոշումները ընդունված կարծրատիպերին, նոր ընկալումները եղած ավանդույթներին՝ ընդդեմ կամ ընդառաջ, անհատի բախումը՝ ստեղծագործության ճանապարհին: **Նուշիկ Միքայելյանի** բանաստեղծական նոր՝ **«Ավելին, քան այսքանը»** ժողովածուն հիմնականում այս մասին է՝ **«Ինձ սիրեցին չափսերս փոխել/ Եվ տեղավորվել... ասենք թե/ փոքրիկ լուցկու տուփի մեջ...»**, գրում է նա: Ժողովածուն բացող այս միտքը հաջորդ բանաստեղծություններում զարգանում ու տիրապետող է դառնում: Փակ տուփը միջավայրի գորշության, կյանքի դասակարգության բանաստեղծական վիճակի արտահայտություն է: Դասակարգության «մեծացող սահմաններում» բանաստեղծությունները նոր բովանդակություն են ստանում. կյանքի մի ժամանակահատվածի (2004-2008) հանդեպ տարբեր վերաբերմունքներով, իր փնտրտուքների ճանապարհին ունեցած ապրումների, բանաստեղծական տրամադրությունների:





Արտաքին եւ ներքին իրականությունների բախում

«Ես իմ սպանված երազը կառնեմ քայլող ուսերիս/ Ու կնվիրեմ իմ բաց աչքերին»: Փորձությունների դաշտում բանաստեղծուհին մերժում է արտաքին պարտադրանքները, կաղապարի դեմ իր ընդվզումը բացահայտելով՝ **«Մի տեղադրեք իմ անսահմանը ձեր կաքսայի մեջ»**:

Իր նախորդ ժողովածուներից մեկում բանաստեղծական պատկերները՝ հարուստ լեզվով, միանգամայն այլ տրամադրությունների արձագանքներ էին՝ առ հայրենիքը, մարդը, կյանքը՝ լուսառաս ու լավատեսական մթնոլորտով: Ներկա ժողովածուում բանաստեղծական պատկերաձեւերն ու արտահայտչամիջոցները ներդաշնակվել են ներկա օրերի միջավայրային տրամադրություններին, մարդկային հարաբերությունների որակին՝ ավելի առտնին, ավելի կյանքային դարձել. **«Մարդ.../ Գահավիժել ես երկնքից/ Եվ կարոտում ես հիմա թռիչքներդ»**/: Ահավասիկ «Կյանքն է» բանաստեղծությունը, կամ «Հերթը իմն էր...» ապրած օրերի շրջանում մարդու գոյության արժեւորումը (հոգեւոր առումով)՝ սիզիփոսյան աշխատանքի հարատեւ այժմեականությամբ: Մարդու կերպարի աղճատումները, նրա հեռացումը իր նախասկզբից, երկփեղկվածությունը՝ ստորին եւ վերին հարթությունների միջեւ. զգայականբնազդայինը եւ հոգեւոր-մտածողականը. **«Նրանք այլեւս քեզ չեն փնտրում, Տե՛ր.../ Նրանք կտցացել են երկնից/ Կտցացել են հողից/ Կտցացել են ծաղիկներից, ջրից, մերից անգամ/ ...Եվ.. ասֆալտ են ուզում.../ Ասֆա՛լտ ու պա՛տ.../**: Եվ ահա կյանքի լավագույն հնարավորությունը, ընծան, ընտրությունը՝ լեռան եւ բլրի առանձին: («Ընտրություն»):

Կյանքային առօրյան թիզ առ թիզ նվաճում է ներաշխարհի բանաստեղծական տարածքը, վրա է գալիս հոգնածությունը՝ կոչչուն ճանապարհը, կյանքի պրոզան ասեղի պես ցցված երազի մաքուր ճանապարհին («Առանց ներշնչանքի»):

Բանաստեղծական ընդվզումները անձնականի սահմանները հատում-տարածվում են. աշխարհը կանգնած է նոր աղետների շեմին՝ սեփական ազգանունը՝ գլոբալիզացիայի ճանապարհին, օտար հայրենիքում՝ անհայրենիք հայը եւ առանց երգի երկիրը. երկու տագնապ՝ մարդկային ու ազգային. **«Երկի՜ր... առանց երգի/ Խոնարհի՜ր աչքերդ/ Եվ գլխարկդ ցած դիր:/ Քանզի զավակներդ/ Սպանել են իրենց ատուբանի առջեւ...ե՛րգդ.../ Ու պատանք են դարձրել զոհված երգիդ համար.../ Դրո՛շը քո»**:

Հույսը չի մեռնում, ահա եւ սպասված ավետիսը. բայց ի՜նչ ավետիս. **«Ավետի՜ս, Ավետի՜ս, Ավետի՜ս.../ Անկախ ենք ինչպես մեռել/ Եվ կախված ենք կախաղանից այն լուսաբացի/ Որի արեւը մինչեւ ծագի/ Պարանը հազար վիզ կնգի...»**:

Ժողովածուի բանաստեղծական տրամադրությունները ներդաշնակորեն լրացվում են հեղինակային գծանկարներով: Գրքի ճաշակավոր տպագրությունն իրականացրել է «Փրինթինֆո» տպագրատունը:

ՄԵԼԻՆԵ ԲԱԴԱԼՅԱՆ

«Ուլիխանյան» կվինտետի ջազը

Երբ Լուի Ամսթրոնգին հարցրին, թե ինչ է ջազը, ահա թե ինչ պատասխանեց. «Եթե հարցնում եք՝ ի՞նչ է ջազը, երբեք էլ չեք իմանա: Ջազը պետք է զգալ...»: Հայաստանում քիչ չեն այն խմբերը, որոնք ոչ միայն զգում են, այլեւ ստեղծագործում այդ ոճում:

Այսօր մենք զրուցում ենք այդ խմբերից մեկի՝ «Ուլիխանյան կվինտետի» գեղարվեստական ղեկավար Մարտին Ուլիխանյանի հետ:

- Ինչպե՞ս ծնվեց ջազային անսամբլ ստեղծելու գաղափարը:

-1997 թվականին ես ու Դիման՝ Արզումանյանը՝ մեր սաքսոֆոնահարը, նվագում էինք տարբեր գործեր երկուսով, դեռ աշակերտ էինք, փոքր էինք, եւ այդ ժամանակ էլ միտք առաջացավ ստեղծելու խումբ: Ու 1997-ին հավաքեցինք կազմ, որը ընթացքում փոփոխության էր ենթարկվում:

- Յուրօրինակ ոճ ունեք: Սինթեզում եք ջազը ավանգարդի հետ դասական կերպով: Ճի՞շտ է իմ պատկերացումը ձեր ոճի մասին:

- Դա հիմնականում պայմանավորված է նրանով, որ ունենք դասական կրթություն: Մասնագիտությամբ կոմպոզիտոր եմ: Բնական է, որ ցանկություն կա չմնալ ջազի շրջանակներում, այլ օգտագործել դասական երաժշտության ձեւը պահող հիմքերը: Այսինքն՝ ձեւը կառուցելու հիմքերը: Այդ իսկ պատճառով շատ ենք օգտագործում տարբեր հայ կոմպոզիտորների մշակումներ: Ոչ, ավանգարդ կերպով չէ մշակված: Ուղղակի ակադեմիական մտածելակերպին բնորոշ ձեւերի մեջ է: Բայց արտահայտչամիջոցներ կան, որոնք ջազից են:

- Ի՞նչ լսարանի համար է ձեր երաժշտությունը:

- Նախատեսված չէ լայն լսարանի համար, շատ մեծ «մասսաների» համար: Ջազը ուղղակի մասսայական չէ...

- Այսօրվա խմբի երաժիշտներին ինչպե՞ս եք գտել:

- Խումբը ֆինանսական ոչ մի հիմք չէր ունենում ընթացքում եւ հիմա էլ չունի: Ընկերական հիմքերի վրա էր, որովհետեւ կամ պետք է գաղափարով միասին լինեինք, կամ էլ առանց փող չէր լինի... Ու հիմա մեզ մոտ այնպես է սացվել, որ ե՛ւ ընկերներ ենք, ե՛ւ գաղափարային առումով իրար հասկանում ենք:

- 2008-ը հայկական ջազի համար հոբելյանական է: 70 տարեկան է դառնում: Ձեր խումբը համերգներով ներկայանալո՞ւ է:

- Դե պետք է ներկայանա՝ ըստ «Շարմ» ընկերության մշակած ծրագրի: Պետք է լինի այդ համերգը, բայց մենք չգիտենք, թե երբ. օրը պարզ չէ:

- Ինչո՞ւ եք հատկապես ջազ նվագում:

- Շատերն ասում են, որ մեր խումբը ընդհանրապես ջազային չէ: Ու ես չեմ կարող ասել, որ սխալ են, որովհետեւ շատ դեպքերում շեղվում ենք ջազից, այսինքն՝ իմպրովիզացիոն բնույթից: Իմպրովիզացիայի քանակը պակասում է գործերի մեջ: Այս վերջին ստեղծագործություններում ընդհանրապես չկա: Լրիվ դասական պարտիտուրայի նման ձեւված մոդելներ են:

- Դուք համերգներ եք ունեցել նվիրված հայտնի շատ կոմպոզիտորների՝ թե՛ ջազ, թե՛ դասական: Դա ձեր խմբի կայացման պրոցեսո՞ւմ էր, թե այդ կերպ պրոպագանդում էիք երաժշտական արվեստի տարբեր ոճեր:

- Ոչ, պրոպագանդելու հարց չկա, որովհետեւ աշխարհում այդ ոճով շատ խմբեր կան: Իսկ եթե պրոպագանդելու խնդիր կար նույնիսկ, դա միայն այն էր, որ արտասահմանում մեր հայ կոմպոզիտորների գործերը նվագելով՝ մենք պրոպագանդում էինք զուտ հայկականը, հայ երաժշտությունը:

- Ձեր խումբը ինչ-որ ջազ-ակումբում նվագո՞ւմ է:

- Ոչ, մենք ակումբային խումբ չենք: Մեր նվագացանկը ավելի համերգային է: Այս ակումբն էլ մենք ստեղծում ենք հատուկ նրա համար: Բայց 3 ամսից Երեւանում «Ուլիխանյան» ակումբ ենք բացելու, որ կարողանանք ներկայացնել մեր ծրագիրը: Ուզում ենք, որ այնտեղ մթնոլորտը ավելի համերգային լինի: Որովհետեւ, եթե մեր եղած ակումբներում խումբը գնում, նվագում է (թեկուզ շատ լավ խմբեր կան) ավելի թեթեւ երաժշտություն, որպեսզի մարդիկ հանգիստ «հաց ուտեն», ոչ թե այն, ինչ իրենք են ուզում նվագել: Եթե նվագեն այն, ինչ ուզում են, մարդկանց կարող է դուր չգալ: Ու իրենք այդտեղ այլեւս չեն աշխատի:

- Ինչպե՞ս է ձեզ ընդունում արտասահմանցի ունկնդիրը:

- Մի տեղ՝ լավ, մի տեղ՝ մի քիչ ավելի վատ: Հիմնականում լավ են ընդունում: Դա կախված է նաեւ մեզնից. երբ մենք ավելի լավ նվագենք, երբ ավելի լավ հանդիսատեսին կզգանք...

ԷՄՄԱ ՁԱՎԱՐՅԱՆ,
Հայ-ռուսական (սլավոնական) համալսարան
4-րդ կուրս

ՀՈԲԵԼՅԱՆ

Վիլյամ Սարոյանի 100-ամյակը՝ Պրահայի ամերիկյան կենտրոնում

Վիլյամ Սարոյանը թերեւս այն միակ մեծ անհատականությունն է, ով կարող էր մի հարկի տակ միավորել հայ, չեխ եւ ամերիկացի մտավորականներին՝ գրողներին, թարգմանիչներին, արվեստագետներին, որոնք երեկ երեկոյան Պրահայի ամերիկյան մշակութային կենտրոնում հավաքվել էին նշելու մեծ գրողի 100-ամյակը: Չեխիայում Հայաստանի եւ Մ. Նահանգների դեսպանությունների հովանավորությամբ հոկտեմբերի 29-ին կազմակերպված հոբելյանական հանդիսավոր երեկոն անցավ ամերիկյան կենտրոնի լեփ-լեցուն դահլիճում: Ավստրիայում եւ Չեխիայում Հայաստանի դեսպան **Աշոտ Հովակիմյանը** եւ Չեխիայում ԱՄՆ դեսպանության հասարակայնության հետ կապերի պատասխանատու **Ջ. Լոուն** ջերմորեն ողջունեցին ներկաներին եւ կարեւորեցին Սարոյան-անհատի դերը ոչ միայն ամերիկյան եւ համաշխարհային գրականության մեջ, այլեւ ժողովուրդների մերձեցման՝ իբրեւ վկայություն բերելով նաեւ օրվա միջոցառումը:

Ավստրիայում Հայաստանի դեսպանության Պրահայի գրասենյակի ղեկավար, դոկտոր **Աշոտ Ոսկանյանը** «Սարոյանը Երեւանում» բանախոսությամբ անդրադարձավ 30 տարի առաջ՝ 1978 թվականին Երեւանի պետական համալսարանում Սարոյանի ունեցած ելույթի որոշ դրույթներին՝ դրանք համեմատելով անձնական հուշերով եւ վերլուծություններով: Իսկ 20 տարի առաջ Մոսկվայի պետական համալսարանի ժուռնալիստիկայի ֆակուլտետում իբրեւ ավարտական թեզ Սարոյանի ստեղծագործությունների հիման վրա նկարահանված «Եղիցի հայոց ոգին» վավերագրական ֆիլմը ներկայացրեց լրագրող **Աննա Կարապետյանը**: Դահլիճը ջերմորեն ընդունեց ֆիլմից ցուցադրված Սարոյանի հայաստանյան այցի արխիվային կադրերը: Սարոյանի կերպարն իբրեւ ամերիկացի գրող ներկայացրեց օրվա հանդիսավարը՝ լրագրող **Յան Չափը**, շեշտելով, որ Սարոյանը Չեխիայում ամենաշատ կարդացվող օտար գրողներից մեկն է:

Այնուհետեւ ելույթներ ունեցան Սարոյանի չեխ թարգմանիչները, ովքեր ժամանակին նաեւ հանդիպել են մեծ գրողին Պրահա այցելության տարիներին: Թարգմանիչ **Յիրի Յոսեքը** մասնավորապես նշեց, որ Սարոյանը չեխերեն ավելի շատ է հրատարակվել, քան որեւէ այլ օտար լեզվով: Չեխիայի կենտրոնական գրադարանում կան պահպանված նրա գրքերի մոտ 50 հրատարակություններ: Իսկ «Թրեյսիի վագրը» պատմվածքը ավելի հաճախ է տպագրվել Չեխիայում, քան ԱՄՆ-ում: Սարոյանի երկերի վերջին տասը տարիների ամենաբեղուն թարգմանիչ եւ երգչուհի **Վերա Կլասերովան** ոչ միայն ներկայացրեց իր ընկալած Սարոյանին, այլեւ անգլերենով կատարեց «Իմ սիրտը լեռներում է» պիեսի հայտնի երգը, ինչպես նաեւ շոտլանդական եւ իռլանդական եւս երկու երգ: Նրա թարգմանությունները տպագրած «Էմինենս» հրատարակչության գլխավոր **Յան Կուխարն** էլ ամերիկյան կենտրոնին նվիրեց Սարոյանի երկերի չեխերեն թարգմանությունների իրենց հրատարակությունները: Երեկոյի ողջ ընթացքում լայն էկրանի վրա ցուցադրվեցին երիտասարդ բեմադրիչ **Անդրան Աբրահամյանի**՝ Սարոյանի կյանքն ու ստեղծագործությունը ներկայացնող լուսանկարչական-տեսաբարային ցուցադրությունը, ինչպես նաեւ հատվածներ չեխական «Թրեյսիի վագրը» մյուզիքլից եւ իր իսկ բեմադրած «Իմ սիրտը լեռներում է» ներկայացումից, որն այս տարի ներկայացվեց նաեւ Երեւանյան «Հայֆեստ» միջազգային փառատոնում: Իսկ նկարիչ եւ «Արմենիա» կազմակերպության նախագահ **Տիգրան Աբրահամյանի** ջանքերով երեկոյի ընթացքում ցուցադրվեցին Սարոյանի չեխերեն, հայերեն եւ անգլերեն լեզուներով հրատարակված գրքերը, ԽՍՀՄ-ԱՄՆ 1991 թվականի համատեղ թողարկած դրոշմանիշը, ինչպես նաեւ լուսանկարների եւ Սարոյանի գրաֆիկական աշխատանքների մի քանի նմուշներ: Միջոցառման ավարտին ներկաները ճաշակեցին հայ-ամերիկյան հյուրասիրություն եւ, ինչպես նշեց բանախոսներից մեկը, այդ ջերմ մթնոլորտում անցկացված երեկոյից ամեն մեկն իր հետ տարավ իր Սարոյանին:

ՀԱՍՄԻԿ ԱՍԱՏՐՅԱՆ
Պրահա

Անվանի ջութակահար Քեթրին Մանուկյանը դարձյալ Կանադայում

Վերջերս կանադահայերը դարձյալ առիթ են ունեցել ունկնդրելու համբավավոր ջութակահար Քեթրին Մանուկյանին: Հայ մշակույթի բարեկամների (ՀՄԲ) կազմակերպությամբ եւ մի շարք ազգային հասարակությունների հովանավորությամբ պոլսահայ միության Մոնրեալի Արամ Խաչատրյանի անվան դահլիճում, 27-ամյա շնորհալի ջութակահարը, ըստ կանադահայ համայնքի «Արագած» շաբաթաթերթի, ներկայացրել է Ռախմանինովի, Ֆրանկի եւ Բրամսի սոնատները, ինչպես նաեւ Դվորժակի սլավոնական զվարթ պարերը: «Մեկնաբանությունը հոյակապ էր, ծափահարությունները՝ անվերջ», գրում է Քրիստինե Գույումճյանը թերթում, ավելացնելով, որ Քեթրինին վայելելու առիթներ կանադահայերը ունեցել են 2003-ին՝ Արամ Խաչատրյանի 100-ամյակի առիթով, ապա՝ 2005-ին Մոնրեալում տված համերգի ժամանակ, իսկ սեպտեմբերի վերջերին էլ կանադական ռադիոկայանների հեռարձակումների միջոցով:

Քեթրինին դաշնամուրի վրա նվագակցել է Քրիստոֆեր Բըրթոնը:

Քեթրինը ներկայիս ճապոնական 17 քաղաքներում համերգներ է տալիս Երեւանի ֆիլհարմոնիկ նվագախմբի ընկերակցությամբ:

Հ. Օ.

Ռուբեն Հայրապետյանը հրաժարական կտա, եթե հասարակական կարծիքը դա պահանջի

Ներկայացվեց ֆեդերացիայի նոր խորհրդանշանը



Երեկ Ֆուտբոլի հանրապետական ֆեդերացիայում լրագրողներին ներկայացվեցին ֆեդերացիայի խորհրդանշանի նոր տարբերակները: Այն իր մեջ ներառում էր Մասիս սարը եւ գնդակը: Եղան տարբեր առաջարկներ, որոնք հաշվի առնելով, նոր խորհրդանշանը կքննարկվի եւ կհաստատվի նոյեմբերին կայանալիք ֆեդերացիայի խորհրդաժողովում: Իսկ ՀՖ հավաքականների ֆուտբոլիստներն իրենց մարզաձեւերին կկրեն միայն Հայաստանի զինանշանը: Այնուհետեւ ֆուտբոլի ֆեդերացիայի նախագահ Ռուբեն Հայրապետյանը պատասխանեց լրագրողների հարցերին:

«Ազգի» այն հարցին, թե երբ է տրվելու ազգային հավաքականի ելույթների գնահատականը եւ ինչ ճակատագիր է սպասում գլխավոր մարզիչ Յան Պոուլսենին, ֆեդերացիայի նախագահը պատասխանեց. «Գնահատականը կտանք տարեվերջին: Յան Պոուլսենը դեռեւ աշխատում է հավաքականում: Նա 2 տարվա պայմանագիր ունի ֆեդերացիայի հետ: Խայտառակ պարտությունների համար բոլորը հիմնականում մեղադրում են գլխավոր մարզչին: Սակայն ես հակված չեմ այդ մտքին: Մեր հավաքականի ֆուտբոլիստները պարզապես պատրաստ չէին խաղերին եւ չէին կարողանում պայքարել խաղադաշտում: Իսն Պորտերֆիլդի ժամանակ էլ լեհերի ու բելգիացիների հետ նույն «անասամ», խայտառակ խաղն էին ցուցադրում: Հավաքականի ֆուտբոլիստների համար ֆեդերացիան բոլոր պայմանները ստեղծել է: Հավաքականի մարզիչը հնարավորություն չունի չորս օրում ֆուտբոլիստների ֆիզիկական վիճակը բարելավելու: Նա պատասխանատու է միայն խաղի տակտիկայի համար: Իհարկե, կարելի է փոխել մարզչին, պատրաստ եմ նույնիսկ իմ գրպանից նրան վճարել պայմանագրի խզման դիմաց հասանելիք փոխհատուցումը, սակայն կարծում եմ, դրանով իրավիճակը չի փոխվի: Բացառությամբ Բերեզովսկու, Հովսեփյանի, Արզումանյանի ու Ոսկանյանի, մյուսները խաղադաշտում չեն կարողանում պայքարել ինչպես հարկն է: Ոտի իմ կարծիքով ավելի լավ է հավաքականում տեղ տալ երիտասարդ ֆուտբոլիստներին»: Կարծում եմ, որ գոնե հավաքականների մարզիչների ընտրության հարցում նախագահը պատասխանատու է:

Անդրադառնալով լրատվամիջոցներով իր հասցեին հնչած մեղադրանքներին, Ռուբեն Հայրապետյանը նշեց, որ ֆեդերացիայի նախագահը պատասխանատու չէ հավաքականների վատ ելույթների համար: Ըստ Հայրապետյանի, իր հրաժարականը կարող են պահանջել այն դեպքում, եթե չարաշահումներ կատարած լիներ, լավ չկազմակերպեր ֆուտբոլի ֆեդերացիայի գործունեությունը, հավաքականների նորմալ գործունեության համար բարվոք պայմաններ չստեղծեր: Միեւնույն ժամանակ նա առաջարկեց սոցհարցումներ կազմակերպել եւ եթե պարզվի, որ հասարակական կարծիքը դեմ է իրեն, ապա իսկույն եւեթ հրաժարական կտա: Թեեւ գտնում է, որ այդ քայլը ոչնչով չի նպաստի մեր հավաքականների հաջող ելույթներին: Որպես լուրջ խնդիր է Հայաստանում թիմերի փոքր քանակը: Ռուբեն Հայրապետյանը նշեց, որ այս ուղղությամբ աշխատանքներ են տարվում եւ ապագայում հնարավոր է թիմերի քանակը աճի:

«Միկայի» պատմությունը ճեղքված էր տվել

Առաջնության 25-րդ տուրում ուշադրության կենտրոնում ոսկե եւ բրոնզե մեդալների հավակնորդներ «Փյունիկի» ու «Միկայի» մրցավեճն էր: Հաշիվը կարող էին բացել «Միկայի» ֆուտբոլիստները, որոնք բավական ակտիվ սկսեցին խաղը: 13-րդ րոպեին Ոսկանյան-Ջենեբյան կոմբինացիայից հետո վերջինիս հարվածը նպաստավոր դիրքից բարձր սացվեց: Իսկ ահա «Փյունիկն» իր հնարավորությունը ձեռքից բաց չթողեց: Ջախ թեւով ներխուժելով տուգանային հրապարակ, Հենրիխ Մխիթարյանը մրցակցի կողքից խաղի հետեւանքով վայր ընկավ ու Սարգիս Հովսեփյանը հաջող իրացրեց 11 մ հարվածը:

Արդեն առաջին խաղակեսում զգացվում էր, որ «Միկայի» պաշտպանական աջ թեւը ճեղքված է տալիս: Փյունիկցիները հաճախակի էին այդ թեւից գրոհում ու վտանգավոր

պահեր ստեղծում: Դեռեւ մինչեւ ընդմիջման գնալը «Փյունիկը» կարող էր ավելացնել հաշիվը, սակայն նպաստավոր դիրքերից վրիպեցին Հենրիխ Մխիթարյանն ու Էդգար Մալաքյանը: «Միկայից» էլ կարող էր աչքի ընկնել Տիգրան, սակայն նրա հարվածը հետ մղեց դարպասապահը:

Ընդմիջումից հետո «Միկան» մեծ ուժերով դիմեց գրոհների, փորձելով փրկել խաղը: Հյուրերը բավական ժամանակ ճնշում էին գործադրում «Փյունիկի» դարպասին, սակայն չկարողացան գոլ խփել: Այդ ընթացքում Վիգեն Համբարձումյանի վտանգավոր հարվածը հետ մղեց «Փյունիկի» դարպասապահը: Տարվելով գրոհներով, «Միկան» լրիվ աչքաթող էր արել պաշտպանությունը, որից հմտորեն օգտվեցին փյունիկցիները: Հանդիպման համար բեկումնային եղավ 73-րդ րոպեին «Միկայի» լեգեոնական Ցանավայի սխալը, որը սեփական կիսադաշտում պարզ հարվածում կորցրեց գնդակը: Փյունիկցիներն անմիջապես գրոհի անցան ու Գետրգ Ղազարյանը մեն մենակ դուրս գալով դարպասապահի դիմաց, 2-րդ գոլը խփեց, ինչը փաստորեն վճռեց խաղի ելքը: Հանդիպման ավարտին հետաքրքրասիրությունը նվազեց: «Միկայի» պաշտպանությունը խաղաղ վերջում լրիվ ճեղքվածք տվեց: Միայն երկու անգամ Ղազարյանը կարող էր եւս երկու գոլ խփել, բայց վրիպեց նպաստավոր դիրքերից: Հանդիպման վերջակետը դրեց Ալբերտ Թադեւոսյանը՝ խփելով 3-րդ գոլը (3-0):

Անսպասելի էր կարծես «Գանձասարի» ու «Կիլիկիայի» մրցավեճում գրանցված ոչ-ոչին (2-2): Այս անգամ էլ արդեն առաջին խաղակեսում հաշիվը բացեց «Կիլիկիան» (Կարեն Խաչատրյան): Ընդմիջումից հետո դաշտերից Ալեքսանդր Պետրոսյանն ու Լեւանդոն առաջ մղեցին «Գանձասարին», սակայն մինչեւ խաղավարտ կրկին աչքի ընկավ «Կիլիկիայի» ռմբարկու Կարեն Խաչատրյանը՝ փրկելով իր թիմին պարտությունից:

«Շիրակի» նկատմամբ «Արարատի» հաղթանակն ապահովեցին թիմի բրազիլացի ֆուտբոլիստները: 22-րդ րոպեին հաշիվը 11 մ հարվածով բացեց Մարկոսը, 10 րոպե անց Ռենատոն 2-րդ գոլը խփեց: Այդ գոլերին «Շիրակը» պատասխանեց Կարեն Կարապետյանի խփած միակ գնդակով (2-1):

Որոշ չափով անսպասելի էր նաեւ «Ուլիսի» հաղթանակը «Բանանցի» նկատմամբ: Հանդիպման միակ գոլի հեղինակն Արտաշես Բաղդասարյանն էր:

Մրցաշարային աղյուսակ

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Փյունիկ	25	17	5	3	37-13	56
2. Արարատ	25	16	5	4	44-20	53
3. Գանձասար	25	12	7	6	36-25	43
4. Միկա	25	12	6	7	34-25	42
5. Բանանց	25	9	7	9	29-24	34
6. Ուլիս	25	4	3	18	14-37	15
7. Շիրակ	25	4	3	18	14-37	15
8. Կիլիկիա	25	2	5	18	20-59	11

Ռմբարկուները

Մարկոս Պիզելի	«Արարատ»	17
Նարեկ Բեգլարյան	«Միկա»	8
Կարեն Խաչատրյան	«Կիլիկիա»	8
Ալեքսանդր Պետրոսյան	«Գանձասար»	8
Գետրգ Ղազարյան	«Փյունիկ»	7
Ալբերտ Թադեւոսյան	«Փյունիկ»	7

ՇԱԽՄԱՏ

Սամվել Տեր-Սահակյանի բախտը չբերեց

Վիեննամում վերջնագիծը հասավ շախմատի աշխարհի պատանեկան առաջնությունը: Ավարտական երկու տուրերը պետք է որոշեին մրցաշարի մրցանակակիրներին տարիքային 6 խմբերում:

Հայաստանի շախմատիստներից մեդալների ամենահրական հավակնորդը Սամվել Տեր-Սահակյանն էր, որը 9-րդ տուրից հետո մի քանի շախմատիստների հետ գլխավորում էր աղյուսակը: Մինչեւ 18 տարեկանների մրցաշարում Սամվելը վերջին երկու պարտիաներն էլ ավարտեց ոչ-ոքի՝ հաշտություն կնքելով վիետնամցի Լի Լե Գուանգի եւ խորվաթ Իվան Սարիչի հետ: Արդյունքում 11 հնարավորից հայ շախմատիստը վաստակեց 8 միավոր ու լրացուցիչ գործակիցները հաշվի առնելով, զբաղեցրեց միայն 4-րդ տեղը: 8 միավոր էին վաստակել 5 շախմատիստներ, որոնցից լրացուցիչ գործակիցներով չեմպիոն հռչակվեց խորվաթ շախմատիստ Իվան Սարիչը: Արծաթե մեդալը նվաճեց վիետնամցի Նգուենը, իսկ բրոնզը բաժին հասավ ԱՄՆ-ը ներկայացնող Շանկլանդին:

Մրցանակակիր դառնալու որոշ հնարավորություններ ուներ նաեւ մինչեւ 10 տարեկանների մրցաշարում հանդես եկող Մանուել Պետրոսյանը: Սակայն նա 10-րդ տուրում պարտություն կրեց եւ զրկվեց մեդալից: 11-րդ տուրում Մանուելը ոչ-ոքի խաղաց եւ 7 միավորով զբաղեցրեց 12-րդ տեղը: Տարիքային այս խմբում չեմպիոնի տիտղոսը նվաճեց լեհ Կրժիշտոֆ Դոտան, որը վաստակեց 9,5 միավոր:

Հայ շախմատիստներից 7-ական միավոր վաստակեցին նաեւ Սյուզան Չարդյանը (մինչեւ 16 տ.) եւ Կարեն Գրիգորյանը (մինչեւ 14 տ.): Սյուզանը զբաղեցրեց 9-րդ տեղը, իսկ Կարենը 13-րդն էր: Կարելի է նշել նաեւ մինչեւ 12 տարեկանների մրցաշարում հաջող հանդես եկած Սուսաննա Գաբրյանին, որը 6,5 միավորով գրավեց 19-րդ տեղը: 5,5-ական միավոր վաստակեցին Տիգրան Հարությունյանը (12 տ., 44-րդ տեղ), Վլադիմիր Կանջարյանը (12 տ. 51-րդ տեղ), Հովհաննես Պետրոսյանը (16 տ., 32-րդ տեղ) եւ Արմեն Նազարյանը (8 տ., 42-րդ տեղ): Իրենց հաշվին 5-ական միավոր գրանցեցին Սիրանուշ Ղուկասյանը (10 տ., 45-րդ տեղ), Մարիա Գետրգյանը (14 տ., 48-րդ տեղ) եւ Դիանա Մնացականյանը (18 տ., 31-րդ տեղ):

Ամենացածր արդյունքը ցույց տվեցին Մարինա Դավթյանը (10 տ., 57-րդ տեղ) եւ Աստղիկ Խալիկյանը (14 տ., 57-րդ տեղ), որոնք վաստակեցին 4,5-ական միավոր:

Անանդը պահպանեց տիտղոսը

Հնդիկ գրոսմայստեր Վիշվանաթան Անանդը պահպանեց շախմատի աշխարհի չեմպիոնի իր տիտղոսը՝ 11-րդ պարտիայում սպիտակներով 24-րդ քայլին հաշտություն կնքելով Վլադիմիր Կրամնիկի հետ: Այսպիսով, նա մրցախաղը շահեց 6,5-4,5 հաշվով: Ինչպես եւ նախատեսված էր մրցակարգով, 12-րդ պարտիան այլեւս չի անցկացվի: Մրցակիցներից յուրաքանչյուրը 750 հազար եվրո կստանա:

Աշխարհի չեմպիոնի տիտղոսը Վիշվանաթան Անանդը կպաշտպանի հաջորդ տարի: Նրա հետ շախմատային թագը վիճարկելու իրավունք կստանա Գատա Կամսկի-Վեսելին Թոփալով մրցամարտի հաղթողը: Այդ մրցախաղը նախատեսված է անցկացնել 2008-ի նոյեմբերի 26-ից դեկտեմբերի 11-ը Լվովում: Մրցախաղի մրցանակային հիմնադրամը 750 հազար դոլար է:

Համաշխարհային շախմատի պատմության մեջ Վիշվանաթան Անանդը աշխարհի 15-րդ չեմպիոնն է, որ ուժեղագույնի տիտղոսը նվաճում է շախմատային թագի հավակնորդի հետ մրցավեճում: Շախմատասերները տեղյակ են, որ մի ժամանակ շախմատային աշխարհը

պառակտված էր եւ աշխարհի առաջնություններն առանձին անցկացվում էին երկու վարկածով: ՖԻԴԵ-ի վարկածով աշխարհի չեմպիոններ են դարձել Անատոլի Կարպովը (1993-1999), Ալեքսանդր Խալիֆմանը (1999-2000), Վիշվանաթան Անանդը (2000-2002), Ռուսլան Պոնոմարյովը (2002-2004), Ռուսլան Կասիմջանովը (2004-2005) եւ Վեսելին Թոփալովը (2005-2006):

Շախմատի աշխարհի չեմպիոնների ցանկը

1. Վիլհելմ Ստեյնից	Ավստրո-Հունգարիա	1886-1894
2. Էմանուել Լասկեր	Գերմանիա	1894-1921
3. Խոսե Ռաուլ Կապաբլանկա	Կուբա	1921-1927
4. Ալեքսանդր Ալյոխին	ԽՍՀՄ	1927-1935, 1937-1946
5. Մաքս Էյվե	Հոլանդիա	1935-1937
6. Միխայիլ Բոտվիննիկ	ԽՍՀՄ	1948-57, 58-60, 61-63
7. Վասիլի Սմիսլով	ԽՍՀՄ	1957-1958
8. Միխայիլ Տալ	ԽՍՀՄ	1960-1961
9. Տիգրան Պետրոսյան	ԽՍՀՄ	1963-1969
10. Բորիս Սպասկի	ԽՍՀՄ	1969-1972
11. Ռոբերտ Ֆիշեր	ԱՄՆ	1972-1975
12. Անատոլի Կարպով	ԽՍՀՄ	1975-1985
13. Գարի Կասպարով	ԽՍՀՄ	1985-1993
14. Վլադիմիր Կրամնիկ	Ռուսաստան	2006-2007
15. Վիշվանաթան Անանդ	Հնդկաստան	2007-...

Դավիթ Նալբանդյանը քառորդ եզրափակիչում

Փարիզում ընթացող թենիսի մրցաշարում երկրորդ հաղթանակը տոնեց Դավիթ Նալբանդյանը՝ առավելության հասնելով իր հայրենակից Դել Պոտրոյի նկատմամբ (6-4, 6-0): Հետաքրքրական է, որ վերջին երեք շաբաթներում դա մրցակիցների արդեն երրորդ հանդիպումն էր: Մադրիդում հաղթել էր Դել Պոտրոն, իսկ Բազելում Նալբանդյանը ռեւանշի էր հասել: Նալբանդյանի հաջորդ մրցակիցը կորոշվի Էնդի Մերեի եւ Ֆեռնանդո Վերդասկոյի մրցավեճում: Քառորդ եզրափակիչ են մտել նաեւ Ռոդիկը, Տսոնգան եւ Բլեյքը:

Էջը պատրաստեց ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

ԼՂՀ

Օրհներգը պիտի ունենալ ստի ու մտքի մեջ

ԼՂՀ պետական խորհրդանիշներն ընդունվել են նախորդ դարի 90-ական թվականների սկզբներին՝ Գերագույն խորհրդի համապատասխան որոշումներով: Սահմանադրության ընդունումից հետո, երկրի հիմնական օրենքի պահանջին համապատասխանեցնելու անհրաժեշտությամբ, Արցախի խորհրդարանն իր հերթական լիագումար նիստում առաջին ընթերցմամբ ընդունել է «ԼՂՀ դրոշի մասին», «ԼՂՀ զինանշանի մասին» եւ «ԼՂՀ օրհներգի մասին» օրենքների նախագծերը:

Դրանց քննարկման ժամանակ ԱԺ պետահրավական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Գարիկ Գրիգորյանը, որը հիշյալ օրինագծերի հեղինակն է, նիստում հայտարարել է, որ ԼՂՀ օրհներգի նոտաները զարմանալիորեն ոչ մի տեղ չեն պահպանվել: Այս հանգամանքով պայմանավորված՝ պատգամավորները հարց են հնչեցրել, թե այդ դեպքում երաժշտության ո՞ր տարբերակն է համարվելու ընդունելի, հատկապես, որ պետական օրհներգը սոսկ պաշտոնական արարողությունների առիթներով չի կատարվում, նաեւ ունենում է խմբերգային ու սոլո կատարումներ:

1993-ին բանաստեղծ Վարդան Հակոբյանի խնդրանքով, որն օրհներգի տեքստի հեղինակն է, մեծանուն դիրիժոր Օհան Դուրյանի ղեկավարությամբ իրականացված ԼՂՀ օրհներգի ձայնագրության օրինակը Ղարաբաղ բերելու պատիվն եմ ունեցել: Փոխանցելու համար հարգարժան դիրիժորն անձամբ ինձ էր հանձնել միայն ձայնագրված ժապավենը, բայց անհնար է պատկերացնել, թե բարձր որակի տեխնոլոգիաներից բաղկացած նվագախումբը հիշյալ ստեղծագործությունը մարմնավորել է առանց նոտագրման ու գործիքավորման:

Երաժշտության հեղինակ Արմեն Նասիբյանը առողջական նկատառումներով ի վիճակի չէ այն վերստին նոտագրելու, եւ ինչպես տեղեկացրել է պետահրավական հարցերի հանձնաժողովի նախագահը, պատվիրվել ու պատրաստվել են երկու տարբերակներ՝ փողային նվագախմբի եւ դաշնամուրի համար: Օրենքը երկրորդ ընթերցմամբ ընդունվելուց հետո, կիրակելի տարբերակն, անշուշտ, կհամընդունվի, բայց մտահոգությունն այն առթիվ, որ պաշտոնական արարողությունների ժամանակ ոչ ոք չի ձայնակցում ֆոնոգրամային՝ դարձյալ մնալու է:

Պետական խորհրդանիշները պիտի հարգել, եւ այս մասին նիստում հիշեցրել է ԱԺ նախագահ Աշոտ Ղուլյանը՝ ընդգծելով, որ առաջին հերթին պետք է պատգամավորներն իմանան հանրապետության օրհներգը:

Ղարաբաղում այս ուղղությամբ հասարակական հարցում թերեւս չի անցկացվել, սակայն դժվար է հերքել, որ պաշտոնյաների գերակշիռ մասը (եթե ոչ բոլորը) ԼՂՀ օրհներգն անգիր չգիտի: Լավագույն դեպքում, այն անգիր են անում դպրոցականները, առավելապես նրանք, ում հանդիսավոր միջոցառումների ժամանակ հանձնարարվում է երգել երկրի օրհներգը: Բնականաբար, ժամանակ անց, երբ նրանցից ոմանք լինեն պետական պաշտոններում, օրհներգը սերտելու կարիք չեն ունենա: Իսկ մինչ այդ, հուսանք, անսալով խորհրդարանի խոսնակի կոչին՝ գոնե արարողակարգերի մասնակիցները կսովորեն Արցախի հիմնը: Եվ ինչո՞ւ միայն նրանք:

Հիմնի ստեղծումից հետո անցած 15 տարում Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը բազում փորձությունների դիմագրավելով՝ հաղթական զինադադար է պարտադրել հակառակորդին եւ այժմ հետեւողականորեն ամրապնդում է իր պետականությունը: Թեկուզ միայն դրա համար արժե այդ երկրի օրհներգը ստի ու մտքի մեջ ողողանքում ունենալ:

ԿԻՄ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ
Ստեփանակերտ

Հակահայ հրեա ակտիվիստը թոշակի է անցնում

«Կալիֆոռնիա կուրիեր» թերթի հրատարակիչ եւ խմբագիր Հարութ Սասունյանը «լավ լուր» է որակում Ամերիկա-հրեական կոմիտեի (ԱՀԿ) մարտավարական ուսումնասիրությունների բաժնի տնօրեն Բարրի Զեյկոբսի թոշակի անցնելը հոկտեմբերի վերջին, որովհետեւ «տարիներ շարունակ նա եղել է Հայոց ցեղասպանության վերաբերյալ կոնգրեսական բանաձեւերի եւ որոշումների դեմ պայքարողների առաջին շարքերում»: Ստորեւ թարգմանաբար նրա հոդվածը՝ որոշ կրճատումներով:

Ամիսներ առաջ իմ հոդվածներից մեկում ես կոչ էի արել, որ Զեյկոբսը հեռանա ԱՀԿ-ից իր երկարատեւ հակահայ դիրքորոշման համար: Չնայած իմ հոդվածը նրա պաշտոնից հեռանալու հետ կապ չի կարող ունենալ, այդուհանդերձ ուրախ եմ, որ նա այլեւս չի կատարելու թուրքական կառավարության պատվերները: Այդ կոչը արել էի այն բանից հետո, երբ նա հակադրվեց Հայ դատի կոմիտեի գործադիր տնօրեն Արամ Համբարյանին Վաշինգտոնում: Փետրվարի 21-ին նա ասաց.

«Մ. Նահանգների եւ Թուրքիայի երկկողմ հարաբերությունները մեծապես կխաթարվեն, եթե այս (Հայոց ցեղասպանության) բանաձեւը ընդունվի: ...Դա մեր դիրքորոշումն է եղել: Աշխարհը լավի ու վատի ընտրության վրա չի հիմնված, առնվազն ոչ այնտեղ՝ գաղտնի ծառայություններում, որտեղ ես աշխատել եմ: Այն հիմնված է վատի եւ ավելի վատի միջեւ ընտրություն կատարելու վրա: Այնպես որ մենք գործնական դիրքեր ենք որդեգրում, եւ այդ գործնական դիրքը բոլոր հրեական, այդ թվում նաեւ ԱՀԿ-ի, կազմակերպությունների համար եղել է անցյալի փաստերի վրա չհիմնավորվելը: Չենք կարծել ու չենք կարծում, որ Մ. Նահանգների Կոնգրեսը այն վայրն է, որտեղ նման հարցեր պետք է լուծվեն: Սա է ամերիկյան կառավարության, ինչպես նաեւ Իսրայելի կառավարության դիրքորոշումը»:

Ավելի քան 10 տարի, իր «բոսերի» ամբողջական հավանությամբ, Զեյկոբսը ագրեսիվ պայքար է մղել ընդդեմ Հայոց ցեղասպանության ճանաչման: 1999 թվի հուլիսի 29-ին «Թրիբ դեյլի նյուսին» տված հարցազրույցում ասել է. «Մեր կառողությունների առավելագույն չափով պաշտպանելու ենք թուրական շահերը ամերիկյան Կոնգրեսում: Մենք դառնալու ենք Կոնգրեսում Թուրքիայի պաշտոնական ընկերները եւ փորձելու ենք նրա օգտին բանաձեւեր ընդունել տալ»:

Խոսելով ավելի շատ կաշառված քարոզիչի, քան մարդու իրավունքների պաշտպան կազմակերպության ներկայացուցչի նման, նա անամոթաբար հայտարարել է. «Մենք ցանկանում ենք համագործակցել Վաշինգտոնում ձեր (թուրական) դեսպանատան, ամերիկաթուրական համայնքի եւ ձեր բազում բարեկամների հետ ու հաղթանակել Կապիտոլ Հիլում վարած մեր մարտերում: Մենք ցանկանում ենք, որ ամերիկացի ժողովուրդը եւ առաջնորդները հասկանան, թե ինչ նվաճումների է հասել Թուրքիան: Մեր ՁԼՄ-ները պետք է ճշգրիտ ձեւով ներկայացնեն Թուրքիայի կարեւորությունը: Չենք ուզում, որ նրանք, ովքեր Թուրքիայի բարեկամը չեն, օգտագործեն մարդու կամ այլ իրավունքներ պաշտպանելու միջոցները ձեր շահերի դեմ»:

Զեյկոբսը խոստովանել է, որ ԱՀԿ-ի նման պաշտպանությունը՝ հօգուտ Թուրքիայի շահերի, բացահայտ հակամարտության առաջ է կանգնեցնելու հրեական կազմակերպություններին՝ ամերիկահայերի եւ ամերիկահույների հետ իրենց հարաբերություններում: Այդ դիրքորոշմանը դեմ են եղել նաեւ իր կազմակերպության բազմաթիվ անդամներ, որոնք հարց են տվել, թե ինչու են պաշտպանում Թուրքիային, որն այդքան վատ վարկանիշ ունի մարդու իրավունքների գծով:

Ես պատրաստվեր չունեմ, որ նրա թոշակի անցնելով իր կազմակերպությունը կփոխի դիրքորոշումը Թուրքիայի հանդեպ: Սակայն երեւի նրա նման անխոնջ ղեկավարի ասպարեզից դուրս գալը հավանաբար մի փոքր կնվազեցնի կազմակերպության գործունեության արդյունավետությունը:

Հույս ունենանք, որ նրան փոխարինողը կվերանայի կազմակերպության մարտավարությունը եւ ճիշտ կգնահատի պատմության ողբերգական էջերը՝ տուրք չտալով թուրքական ժխտողական քաղաքականությանը:

Թարգմ. Հ. Ծ.

«Կյուրս» ՍՊԸ-ին անհրաժեշտ են տեխնիկական կրթությամբ եւ սեփական ավտոմեքենաներով վաճառքի խորհրդատուներ՝ Աբովյան, Էջմիածին, Արմավիր, Գյումրի, Հրազդան, Ջրաշենցավան քաղաքներում աշխատելու համար: Ինքնակենսագրություններով ներկայանալ «Կյուրս» ՍՊԸ գրասենյակ՝ Աշտարակի խճուղի 2/2, հեռ.՝ 39 53 47, 39 53 48:

10 YEARS

ՈՒՇԱԴՐՈՒՄ

2008 թ. հոկտեմբերի 28-ին տպագրված ՊԳԳ-ԳՀՇՋԲ-08/64 ծանուցագրով գնանշման հարցման հայտարարության մեջ **«ՀՀ ոստիկանության կարիքների համար շերտավարագույրների գնման նպատակով»** բառերի փոխարեն կարդալ **«ՀՀ գյուղատնտեսության նախարարության կարիքների համար տրակտորների պետհամարանիշների պատրաստման ծառայությունների գնման նպատակով»** բառերը:

Պետական Գնումների Գործակալություն

ՀՀ կենտրոնական բանկը տեղեկացնում է, որ արժութային շուկայում ձեւավորվել են հետեւյալ արտարժույթների միջին փոխարժեքները. 30.10.2008 թ.

ISO-ի կոդը	Միավոր	Արտարժույթ	Միջին փոխարժեք
USD	1	ԱՄՆ դոլար	305.78
EUR	1	ԵՎՐՈ	398.89
RUR	1	Ռուս. ռուբլի	11.46
GEL	1	Վրաց. լարի	215.49

«ԷԿՈՆՈՄԻԿԱ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔ» ԿԵՆՏՐՈՆ
Մ. Բաղրամյան 24դ.
54-24-81, 54-74-81

«Էկոնոմիկա եւ Իրավունք» կենտրոն
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ
ԱՐՏԱՀԵՐԹ ՍԵՄԻՆԱՐ - ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ
կազմակերպությունների ղեկավար կազմի համար
- փոփոխությունների ներկայացում,
- բարդ իրավիճակների քննարկում եւ պարզաբանում,
- հարցերի պատասխաններ

ԳՈՎԱՅԴԻ ՀԱՄԱՐ ՀԱՆԳԱՄԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունեությունն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետության 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրված՝ 17.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիսեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրված է տպագրության՝ 30.10.2008, գինը՝ 100 դրամ, տպագրում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում՝ Արշակունյաց 2:

«ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՅՐԵՆԻՔԻ» ՏԱՐԱԾՔԻ ԽՆԴԻՐ

Պարզաբանում

Հայաստանի Հանրապետության, ի դեմս ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության եւ «Ժողովրդավարական հայրենիք» կուսակցության միջեւ 2005 թ. մարտի 28-ին կնքվել է վարձակալության պայմանագիր, որով Երեւան քաղաքի Վ. Վաղարշյան փող. թիվ 12 շենքի 320.0 քմ մակերեսով, պետական սեփականություն համարվող ոչ բնակելի տարածքը վարձակալության է հանձնվել կուսակցությանը վերջինիս կողմից գործունեություն ծավալելու նպատակով: Նշված տարածքի նկատմամբ Հայաստանի Հանրապետության իրավունքները 2006 թ. փետրվարի 10-ին վերագրանցելուց հետո 2006 թ. օգոստոսի 9-ին, կողմերի միջեւ կնքվել է նոր պայմանագիր 314.7 քմ մակերեսով տարածքը 94.410 ՀՀ դրամով կուսակցությանը վարձակալության հանձնելու վերաբերյալ:

2006 թ. մայիսի 31-ին կուսակցությանը նշված ոչ բնակելի տարածից 170.0 քմ տարածքը 460.0 հազ. ՀՀ դրամով ենթավարձակալության է հանձնել ՀՀ սոցիալական ապահովության պետական հիմնադրամի Արաբկիր տարածքային կենտրոնին, իսկ 2006 թ. դեկտեմբերի 13-ին նույն կենտրոնին 240.0 դրամով ենթավարձակալության է հանձնել եւս 69.0 քմ տարածք: Կուսակցության գրասենյակը գործել է մնացած 75,7 քմ տարածքում, որը բավարար է եղել նրա գործունեության իրականացման համար:

Փաստորեն, պետությունից 94.410 ՀՀ դրամով վարձակալած տարածքի մի մասը 700.0 հազար դրամով (շուրջ 7 անգամ ավելի գնով) ենթավարձակալության հանձնելով պետական կազմակերպությանը կուսակցությունը սպացել է օգուտ:

Ավելին՝ 2007 թ. դեկտեմբերի 27-ին ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն է մուտքագրվել ՀՀ սոցիալական ապահովության պետական հիմնադրամի նախագահի 2007 թ. դեկտեմբերի 26-ի թիվ 04/8245 գրությունը, որով տեղեկացնելով կնքված ենթավարձակալության պայմանագրերի պայմանների մասին, հիմնադրամը հայտնել է, որ կուսակցությունը դիմել է հիմնադրամին ենթավարձակալության հանձնված տարածքների ամսական վարձավճարները 200.000 դրամով բարձրացնելու պահանջով: Հիմնադրամը, հաշվի առնելով, որ նմանատիպ ծախսերը պարտադիր սոցիալական ապահովության բյուջեով պլանավորվում են նախապես, կուսակցությանը տեղեկացրել է, որ նշված հարցին հնարավոր է անդրադառնալ տարեվերջին:

Նշված գրությամբ հայտնվել է նաեւ. «Սույն թվականի դեկտեմբերին պարոն Պ. Մակեյանը կրկին դիմել է հիմնադրամին վերոհիշյալ պայմանագրերով նախատեսված մակերեսների ամսական վարձավճարն արդեն 250.000 դրամով բարձրացնելու պահանջով, որի հնարավորությունը հիմնադրամը, ցավոք, չունի, քանի որ օրենսդրական փոփոխություններով 2008 թվականից հիմնադրամն իր առանձին բյուջեն չի ունենալու, իսկ նմանատիպ ծախսերն այստեղ ֆինանսավորվելու են ՀՀ պետական բյուջեի միջոցներով»:

Հայտնելով վերոգրյալի մասին հիմնադրամը խնդրել է վարչության աջակցությունը ՀՀ սեփականությունը հանդիսացող տարածքների վարձակալության պայմանագրերը վարչության հետ անմիջականորեն կնքելու, իսկ անհնարինության դեպքում հիմնադրամի տարածքային կենտրոնին այլ մակերես տրամադրելու հարցում: Վարչության տնօրինման տակ ազատ տարածքների բացակայության պատճառով հիմնադրամի խնդրանքը չի բավարարվել:

ՀՀ կառավարության 2007 թ. դեկտեմբերի 27-ի թիվ 1531-Ն որոշմամբ «Հայաստանի Հանրապետության սոցիալական ապահովության պետական հիմնադրամ» ՊՈԱԿ-ը վերակազմավորման ձեւով վերակազմակերպվել է ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության կառավարման ոլորտում գործող «Սոցիալական ապահովության պետական ծառայության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկի, որը ֆինանսավորվում է ՀՀ պետական բյուջեի միջոցներից:

Վերոգրյալը նկատի ունենալով ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությունը հայց է հարուցել Երեւանի քաղաքացիական դատարան ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 467-րդ հոդվածի պահանջներին համապատասխան 2006 թ. օգոստոսի 9-ի պայմանագրի 1.1 կետում «314.7 քմ» բառերը «75.7 քմ» բառերով փոփոխելու, իսկ 3.1 կետում «94410 դրամ» բառերը «22.710 դրամ» բառերով փոփոխելու պահանջով:

Դատարանի վճռով «Ժողովրդավարական հայրենիք» կուսակցությանը թողել են 75.7քմ տարածք, որը կուսակցությունը փաստացի տիրապետում եւ օգտագործել է 2006 թվականի դեկտեմբերից:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության մամուլի ծառայություն